ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

30ՐԴ ՏԱՐԻ

1890

ՆՈՅԵՄԲԵՐ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԽԱՌԱՐԷ Ի ԼՈՅՍ 505
ՍԻՐՈՒՀՈՒՍ ԱՆՄՈՌԱՑԸ 515
ԱՌ ԴԱՇՆԱԿԱՑՈՒՆ 516
ԹՈՒՂԹ Ի ՏԱՆԷՆ ԿԻԼԻԿԻՈՅ 517
ՓՇՐԱՆՔ 524
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ 526
ԱՌ ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՆՈՐԱՊՍԱԿ ԱՄՈՂՍ ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՄԱՐԻՅԱ ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ 529
ՀՈՂԱՆՏԱՅԻ ԹԱԴԱՒՈՐՆ 530
ՀԱՆՐԱԳԻՐ ՀԱՅ ԵՐԵՒԵԼԵԱՅ ԱՌ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆՆ 532
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈԳԻ 534
ԱՍՏՂ ԲԵԹԼԵՀԷՄԻ 542
ՄՏԱԾԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ (Ն--Ն--) 545
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ (Շ--Դ--Ր) 548
ԼՐԱՔԱՂ 550
ՔԱՂԱՔԱԿԱՆ . . . . . »
ՆՈՒՊԱՐԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ, ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ 552

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՂԱՓԱԿԱՆ

Ի· ՏԱՐԻ 1890 ՆՈՅԵՄԲԵՐ

ԽԱՒԱՐԷ Ի ԼՈՅՍ

ԳԼՈՒԽ Զ·

ԱՆԴՈՀԱՅՈՒՑԻՉ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ճամբայ ելայ և անհնարին արտորնօք, որքան որ չուտ կրնար տանել գիս ջոգին, հասայ Ճէնովա՝ ուր իսկոյն սկսայ խուզարկութիւններս որպէս զի տոքտօր Սէնէրիի բնակարանը գըտնեմ։ Կ'յուսայի, որ դիւրին գործ մը պիտի լինէր զանի գտնել։ Իր խօսքերէն այնպէս մակաբերեր էի թէ այդ քաղքին մէջ իր արհեստը կ'բանէր։ Եթէ այս ճիշտ էր, անտարակոյս նա չատերու ծանօթ պիտի լինէր։ Թերևս նա դիտմամբ իր բուն տեղը չէր յայտնած ինձ կամ ես խաբուած էի։ Շատ օրեր՝ բարձր ու ստորին դասակարգերու մէջ՝ ամէն կողմն փնտռեցի, բայց ոչ ոք կարող եղաւ ինձ ըսել թէ այդ մարդն իրեն ծանօթ էր։ Նոյն քաղքին բոլոր բժիշկներուն դիմեցի, ամենքն ըսին ինձ որ լիովին անգիտակ էին այդպիսի պաշտօնակցի մը։ Ի վերջէ՝ իրբեւ ստոյգ հաւատալ սկսայ որ նա ինձ սուտ անուն մը տուած էր կամ Ճէնովա իր բնակութեան վայրը չէր։ Որքան աննչան

լինէր տոքտօր մը տարակոյս չկայ որ իր պաշտօնակից ընկերներ-
ուն միոյն ծանօթ պիտի լինէր մի և նոյն քաղքին մէջ։ Ուստի
որոշեցի գնալ Դուրին և անդ փորձել իմ բաղդս։

Այս որոշմանս համեմատ՝ հետևեալ օրն պիտի մեկնէի և
առաջի իրկուն դէս ու դէն կ'շրջէի՝ ջանալով համոզուիլ որ ի
Դուրին թերևս աւելի բաղդաւոր պիտի լինէի, երբ նշմարեցի
մարդ մ'որ փողոցին դիմացի կողմէն կ'անցնէր։ Իր կերպարանն
ու թնտուածքն ծանօթ լինելով ինձ, իսկոյն ճամբուն միւս
կողմն անցայ, որ զինք մօտէն դիտեմ։ Զբօսաշրջիկի մ'անհրա-
ժեշտ հագուստն հագած լինելով՝ նա սովորական անգլիացի
ուղևորի մը կերպարանն ունէր — այնքան որ կարծեցի թէ կը
սխալէի։ Բայց և այսպէս իմ գտումս ճիշտ էր։ Իր տարօրէն
հագուստին չնայելով՝ իսկոյն ճանչեցի զինք երբ իր մօտը գացի։
Իրօք այն մարդն էր որու հետ Ֆէնյօն խօսքի եկած էր Սան
Ճիովաննի եկեղեցիէն դուրս — այն մարդն որ յանդիմաներ էր
մեզ, վասն զի Բոլինի վրայ մեր սքանչացումն բարձրաձայն
յայտներ էինք — այն մարդն որ Սէնէրիի հետ թև թևի տուած
մեկներ էր։

Անհրաժեշտ էր ինձ օգուտ քաղել այս բարեպատեհ առթէն։
Դէթ այս պարոնը պիտի դիտնար թէ ուր կրնար գտնուիլ տոք-
տօրը։ Կ'յուսայի որ դէմքեր որոշելու մասին իր յիշողութիւնն
իմինիս չափ հաւատարիմ չէր, և թէ մեր վերջին հանդիպումի
ժամանակ տեղի ունեցած անախորժ դէպքը չպիտի վերադրէր
ինձ։ Ուստի դիմաւորեցի զինք և փեղջրս հանելով խնդրեցի որ
շնորհ ընէ պահ մը հետս խօսակցելու։

Անգլիարէն կ'խօսէի։ Նա արագ, թափանցիկ ակնարկ մը
նետեց իմ վրայ, և ապա բարևս առնլով յայտարարեց նոյն
լեզուաւ թէ պատրաստ էր իմ փափաքս կատարելու։

— Կ'ջանամ գտնել պարոնի մը հասցէն, պարոն մ'որ կար-
ծեմ այս քաղաքը կ'բնակի։ Արդեօք չէ՞ք կարող օգնել ինձ որ
այդ հասցէն գտնեմ։

Նա խնդաց։ — Շա՛տ լաւ. օգնեմ, եթէ կարող եմ — բայց
ես ևս ձեզի պէս անգլիացի լինելով և շատ քիչ մարդ ճանչե-
լով՝ կ'վախնամ որ չպիտի յաջողիմ աջակցիլ ձեզ։

— Շատ կ'փափաքիմ գտնել տոքտօր մ'որու անունն է Սէ-
նէրի։

Այս խօսքիս վրայ ըրած ոստումն, իմ վրայ ձգած գրեթէ
ահաբեկ նայուածքը ցոյց տուին ինձ որ անունը ճանչեց։ Բայց
մէկ բոպէի մէջ ուշաբերելով ըսաւ.

— Այդ անունը չեմ կարող յիշել։ Կ'ցաւիմ ըսելու որ չը պիտի կարենամ օգնել ձեզ։

— Բայց, յարեցի իտալերէն լեզուաւ, ես տեսած եմ ձեզ անոր հետ։

Նա ունքը պռստեց մոլեգին։

— Ես այդպիսի անուամբ մարդ չեմ ճանչեր։ Մնաք բարեաւ։

Այս ըսելով փեղոյրը հանեց և առաւ քալեց։

Անշուշտ այսպէս դիւրաւ չպիտի թողուի իր օձիքը։ Շուտ շուտ քալելով վերստին դացի քովը ու ըսի.

— Նորէն կ'աղաչեմ ձեզ ըսել ինձ թէ արդեօք ո՞ւր կարող եմ գտնել զանի։ Անհրաժեշտ է ինձ տեսնել փնտռած անձս կարևոր գործի մը համար։ Ինչո՞ւ կ'ուրանաք, գիտեմ թէ նա ձեր բարեկամն է։

Խօսակիցս պահ մը վարանելէն ետև՝ կայ առաւ.

— Պարոն, շատ գլուխ կ'ցաւցնէք։ Կարո՞ղ էք արդեօք յայտնել ինձ թէ ինչպէս գիտէք որ ձեր փնտռած մարդն իմ բարեկամս է։

— Տեսայ ձեզ միասին՝ թև ի թև։

— Ներելի՞ է ինձ հարցնել թէ՝ ո՞ւր։

— Ի Դուրին — անցեալ գարնան ժամանակ, Սան Ճիովանիի մօտ։

Պարոնն ուշադիր նայեցաւ ինձ։ — Այո՛, կ'յիշեմ ձեր դէմքը. դուք այն պարոնն էք որ տիկին մը նախատեցիք և զոր երդում ըրած եմ անպատիժ չթողուլ։

— Բնաւ նախատելու դիտում չկար. և եթէ լինէր անգամ, այժմ այդ պարագայն կրնայ անտես անցնիլ։

— Ի՞նչպէս նախատինք չկար։ Ես աւելի թեթև բանի մը համար մարդ մը սպաննած եմ, ուր մնաց ձեր բարեկամին խօսքը որ շատ ծանր էր։

— Խնդրեմ յիշեցէ՛ք որ ես բերանս չբացի։ Բայց այդ չէ կարևորն։ Ես կ'ուզեմ տեսնել տոքտօր Սէնէրին՝ իր քրոջ աղջկան, Բօլինի կողմէ։

Անհնարին զարմացման երևոյթ մ'առաւ խօսակցիս դէմքը։

— Դուք ինչ առնելիք տալիք ունիք իր քրոջ աղջկան հետ, հարցուց նա բրտօրէն։

— Այդ իր և իմ գիտնալիք բանս է։ Հիմակ ըսէ՛ք ինձ նայիմ ո՞ւր կարող եմ գտնել տոքտօրը։

— Ի՞նչ է ձեր անունը, հարցուց նա կտրուկ ձայնով մը։

— Կիլպէրդ Վ.օկան։

— Դուք ինչ էք աղգաւ։

— Ես պարզապէս անգլիացի եմ։

Խօսակիցս մի քանի բոպէ մտածեց և ապա,

— Կարող եմ տանիլ ձեզ, ըսաւ, տոքտօր Սէնէրիին մօտ, բայց պարտիմ գիտնալ թէ ինչո՞ւ համար գինք տեսնել կ'ուզէք և ինչո՞ւ կ'յիշէք Բոլինի անունը։ Փողոցը այս խօսակցութեան յարմար տեղ չէ — արի՛ ուրիշ տեղ երթանք։

Առի խօսակիցս և պանդոկս տարի սենեակ մ'ուր կարող էինք հանդիստ խօսիլ։

— Նախ պատասխան տուէք, Պ. Վ.օկան, իմ հարցմանս, և ապա պիտի նայիմ թէ ինչպէս պիտի կարող լինիմ ձեզի օգնել։ Բոլին Մարչ ինչ յարաբերութիւն ունի այս գործին հետ։

— Նէ իմ կինս է — խմացա՞ք հիմակ։

Խօսակիցս յանկարծ ցատկեց ոտքի վրայ — իտալական վայրագ հայհոյանք մը հանեց բերանէն։ Իր դէմքն կատաղութենէ մոխիր դարձած էր։

— Ձեր կինն, գոչեց։ Սո՞ւտ կ'խօսիք — այո՛, սո՞ւտ կ'խօսիք։

Ես ևս ոտքի ելայ, իրեն պէս կատղած, այլ աւելի զգաստ.

— Պարոն, ես ձեզի ըսի որ անգլիացի եմ։ Ներում խնդրեցէք այդ խօսքին համար թէ ոչ հիմակ խայտառակութեամբ սենեկէս դուրս պիտի վռնտեմ ձեզ։

Իր կատաղութիւնն հազիւ կրցաւ զսպել և ըսաւ նա.

— Ներում կ'խնդրեմ, անիրաւ էի։ Միթէ Սէնէրի գիտէ՞ այդ բանն, հարցուց նա յանկարծ։

— Անտարակոյս, և ներկայ էր մեր ամուսնութեան։

Այնպէս կ'երևէր որ իր զայրոյթը քիչ մնաց նորէն պիտի բռնէր։ Միայն կատաղորէն փսփսաց իւրովի վատաղգի, մատնիչ զոր լսեցի։ Ապա հանդարտ դէմքով մը դարձաւ ինձ և ըսաւ.

— Եթէ այդպէս է, ուրիշ ընելիք բան մը չունիմ, Պ. Վ.օկան, այլ միայն ձեզ շնորհաւորել։ Իրաւի նախանձելի է ձեր բաղդը։ Գեղանի է կինդ, և անտարակոյս չատ բարի։ Ձքնաղ ընկերուհի մը պիտի գտնէք գինք։

Շատ բան տալու տրամադիր էի իմանալու համար թէ ինչ պատճառաւ այնքան զայրագին փոթորիկ յուղեց իմ ամուսնութեան լուրը խօսակցիս սրտին մէջ։ Իսկ աւելի մեծ վարձ պիտի տայի եթէ կարող լինէի իտալացին դուրս վռնտելով բռնցի՝ իմ

ըրած սպառնալիքս ի գործ դնէի։ Իր վերջին բառերուն արտասանած կերպէն իմացայ որ իրեն քաջածանօթ էր Բոլինի մտային վիճակը։ Մեծ էր փափաքս այդ մարդուն գլուխը ճզմել, բայց ստիպուեցայ դայրոյթս զսպել, քանի որ չպիտի կրնայի Սէնէրին գտնել առանց անոր աջակցութեան։

— Շնորհակալ եմ ձեզ, ըսի հանդարտօրէն. թերևս հիմակ պիտի հաճիք տալ ինձ խնդրած տեղեկութիւններս։

— Դուք, Պ. Վ.օկան, շատ ջերմեռանդ փեսայ մը չէք, ըսաւ իտալացին հեգնօրէն։ Եթէ Սէնէրի ներկայ էր ամուսնութեանդ, անշուշտ մի քանի շաբաթ առաջ պիտի լէնէր։ Շատ կարևոր պիտի լինի այն խնդիրն որ ձեզ այսպէս կ'հեռացնէ նոր հարսէն։

— Այո՛, կարևոր խնդիր մ'է։

— Ուրեմն պէտք է մի քանի օր սպասել։ Սէնէրի ձէնովա չէ։ Բայց պատճառ ունիմ կարծելու որ գրեթէ շաբաթէ մը պիտի վերադառնայ։ Պիտի տեսնեմ զինք և պիտի ըսեմ որ ատ, քաղաքս կ'գտնուիք։

— Դուք ըսէ՛ք ինձ թէ ո՞ւր կրնամ գտնել և ես կ'այցելեմ զինք։ Պարտաւոր եմ իրեն հետ խօսիլ։

— Կարծեմ թէ տոքտօրն ինչպէս որ որոշէ այնպէս պիտի վարուիք։ Ես միայն պիտի յայտնեմ անոր ձեր փափաքը։

Այս ըսելով՝ գլուխը ծռեց ու գնաց։ Այնպէս կ'երևակայէի թէ կասկածելի էր յաջողութիւնս և թէ չպիտի կրնայի տեսակցիլ խորհրդաւոր բժշկին հետ։ Բոլորովին իր կամքէն կախում ունէր այդ տեսակցութեան շնորհն։ Թերևս նա Ճէնովա գար և նորէն երթար առանց զիս տեսնել ուզելու, միայն թէ իր բարեկամն կամ ինք յանձն առնէր ինձ լուր մը հաղորդել։

Շաբաթ մը սպասեցի, և ապա սկսայ վախնալ որ Սէնէրի որոշած էր բնաւ չմօտենալ ինձ։ Բայց կ'սխալէի։ Առաւօտ մը նամակ մ'առի. որ միայն մի քանի խօսք կ'պարունակէր։

«Փափաք ունիք զիս տեսնել։ Կառք մը պիտի գայ ձեզ առնելու ժամը տասն մէկին։»

Մ. Ս.

Իրօք ժամը տասն մէկին վարձու սովորական կառք մը կեցաւ պանդոկին առջև։ Կառապանը հարցուց թէ Պ. Վ.օկան ո՞ւր է։ Իսկոյն իջայ և առանց բառ մ'ըսելու կառքը մտայ, որ տարաւ զիս քաղաքէն դուրս փոքրիկ տուն մը։ Ցոյց տուին ինձ սենեակ ուր գտայ տոքտօրն սեղանի մ'առջև՝ որ ծածկուած էր

լրագիրներով ու նամակներով։ Տոքտորն ոտք ելաւ և ձեռքս թոթուելով խնդրեց որ նստիմ։

— Պ. Վ.օկան, իմացայ որ ձէնովա եկած էք զիս տեսնելու համար։

— Այո՛, փափաքեցայ ձեզի մի քանի հարցումներ ուղղել կնոջս նկատմամբ։

— Պիտի պատասխանեմ ինչ որ կարող եմ — բայց կան շատ հարցումներ որոնց անշուշտ պիտի մերժեմ պատասխանելու։ Իմ պայմանագրութիւնս կ'յիշէք անտարակոյս։

— Այո՛, բայց ինչո՞ւ համար կանխաւ չիմացուցիք ինձ կնոջս այս տարօրինակ վիճակը։

— Շատ անգամ զինք տեսած էիք։ Իր վիճակը նոյնն էր, ինչ որ էր երբ առաջին անգամ այնքան հրապուրելի երևեցաւ ձեզ։ Կ'ցաւիմ, որ ինքզինքդ խաբուած կ'կարծէք։

— Ինչո՞ւ համար ամեն բան չյայտնէցիք ինձ։ Այն ժամանակ և ոչ մէկը պիտի մեղադրէի։

— Շատ պատճառներ ունէի, Պ. Վ.օկան։ Բոլին իմ վրայ ծանր պատասխանատուութեան բեռ մ'էր. մեծ ծախուց դուռ մը, վասն զի աղքատ մարդ մ'եմ։ Բայց և այնպէս, միթէ շատ վա՞տ գործ մ'ըրիք։ Բոլին գեղանի է, բարի է և սիրալիր։ Նէ սիրասուն կին մը պիտի լինի։

— Իրա՞ւ է որ փափաք ունէիք այդ բեռը թոթուել։

— Բոլորովին այդ չէր միտքս։ Կան պարագաներ — չեմ կարող բացատրել — որ յորդորեցին զիս խնդագին ամուսնացնել զինք հարուստ անգլիացիի մը հետ։

— Առանց խորհելու սակայն թէ այդ մարդն ինչ պիտի ըզգար տեսնելով որ գրեթէ մանկիկ մը սիրեր է։»

Բարկութիւնս բռնեց և բացէ ի բաց յայտնեցի իմ կարծիքը։ Սէնէրի գրեթէ անտարբեր մնաց սրտմտութեանս առջև և կատարեալ հանդարտութեամբ մտիկ ըրաւ։

— Նկատելի ուրիշ կէտ մը կայ, յարեց Սէնէրի։ Իմ կարծեօք՝ Բոլինի հիւանդութիւնն բնաւ յուսահատական չէ։ Ես միշտ ամուսնութիւնը կարևոր դարմաններէն մին նկատած եմ։ Եթէ միտքն, աստիճան մը, պակաս է, ես կարծեմ թէ քիչ քիչ կըրնայ կազդուրիլ, և կամ կրնայ վերադառնալ յանկարծակի, ինչպէս որ թռաւ։

Սիրտս այս յուսալից խօսքերէն թրթռաց։ Որքան որ կ'զգայի թէ հետս անգթօրէն վարուէր էին, որքան որ եսասիրական նը-

պատակներու համար իբրև գործիք գործածեր էին զիս, տրամադիր էի իմ այս վիճակիս խնդագին համակերպիլ, եթէ միայն ապագայ յոյս մ'ունէնայի։

— Արդեօք կ'հաճիք տալ ինձ իմ եղկելի կնոջս վիճակին վերայ ամեն կարևոր տեղեկութիւնները։ Կարծեմ թէ միշտ այս վիճակը չէ ունեցած։

— Բնաւ տմենևին։ Շատ տարօրինակ է իր կացութիւնը։ Քանի մը տարի առաջ մեծ հարուստ մ'ընդունեց — յանկարծական կորուստ մը կրեց։ Ահա այս պատճառաւ իր մտքին մէջ անցելոյն հետքը չմնաց։ Քանի մը շաբաթ հիւանդ պառկելէն ետև անկողնէն ելաւ յիշողութենէ բոլորովին զուրկ։ Մոռցած էր ամեն վայրերը — բարեկամներն օտար էին իրեն համար։ Իր միտքն, ինչպէս կ'ըսէք, մանկան մը մտքին պէս էր։ Բայց մանկան մը միտքը կ'աճի և եթէ լաւ խնամք տարուի, Բոլինինն ալ պիտի բացուի։

— Ի՞նչ էր իր հիւանդութեան պատճառը — ինչ էր հարուածը։

— Այդ այնպիսի հարցումներէն մին է որու չեմ կարող պատասխանել.

— Բայց իրաւունք ունիմ իմանալու։

— Դուք իրաւունք ունիք հարցնելու, և ես ալ իրաւունք ունիմ մերժելու։

— Գէթ խօսեցէք ինձ իր ընտանիքին — իր ազգականներուն վրայ։

— Բնաւ չունի, կարծեմ, բաց իրմէ։»

Ուրիշ հարցումներ ևս ուզեցի Սէնէրիին, բայց յիշատակութեան արժանի պատասխաններ չառի։ Անգլիա պիտի դառնայի ոչ աւելի հմուտ քան երբ անտի հեռացայ։ Բայց խնդիր մը կար որու մասին որոշ պատասխան մը ստանալու համար շատ պընդեցի։

— Այն ձեր մի բարեկամը — այն անդլիախօս իտալացին, ինչ յարաբերութիւն ունի Բոլինի հետ։

Սէնէրի իր ուսերը ցնցեց և ժպտեցաւ։

— Մագարին։ Լա՛ւ, ուրախ եմ որ ձեր այդ հարցման լիուլի պատասխան մը տալու կարող պիտի լինիմ, Պ. Վ.օկան։ Մէկ կամ երկու տարի առաջ, Մագարի այնպէս կ'ենթադրէր թէ կը սիրէր իմ քրոջս աղջիկը։ Հիմակ նա շատ կատղած է որ թոյլ տուի նէրա ամուսնութեան։ Նա կ'ըսէ թէ նէրա բուժման կը սպասէր որպէս զի իր բաղդը փորձէ։

— Եւ ինչո՞ւ համար զանի ձեր նպատակին անյարմար դառաք, որքան ես յարմար կ'երևիմ։»

Սէնէրի սուր աչքով ինձ նայեցաւ։

— Միթէ դժգո՞հ էք, Պ. Վ.օկան։

— Ո՛չ — ո՛չ, եթէ միայն յոյս մը, թեթև յոյս մ'անգամ ունենայի բժշկութեան։ Բայց ահա կ'ըսեմ ձեզ, տոքտոր Սէնէրի, վատօրէն խաբեցիք զիս։

— Ոտք ելայ որ մեկնիմ։ Այն ժամանակ Սէնէրի աւելի ըզգացումով խօսիլ սկսաւ քան ինչ որ մինչև ցարդ խօսեր էր։

— Պ. Վ.օկան, այդքան խստիւ մի' դատէք զիս։ Կ'խոստովանիմ որ անիրաւութեամբ վարուեցայ ձեզի հետ։ Բայց կան բաներ որոց վրայ բնաւ տեղեկութիւն չունիք։ Պիտի հաղորդեմ ձեզի շատ աւելի բաներ քան ինչ որ մտադիր էի ըսել։ Բոլինի հարուստ և հանգիստ վիճակ մը տալու իղձս անդիմադրելի էր։ Շատ մեծ գումար մը պարտական եմ այդ աղջկան։ Երբեմն իր հարստութիւնն յիսուն հազար ոսկիի կ'հասնէր։ Բոլոր այդ դրամը վատնեցի —

— Եւ ինչպէս կ'համարձակիք պարծիլ այդ բանին համար, ըսի դառնապէս։»

Սէնէրի ձեռքն շարժեց արժանապատուութեամբ։

— Այո՛, համարձակ կ'խօսիմ այդ խնդրոյն վրայ։ Վատնեցի այդ գումարը Իտալիոյ համար . . . ։ Ես էի աւանդապահն։ Ես որ Ծոյն իսկ իմ հայրս պիտի կողոպտէի, իմ որդիս անգամ, միթէ պիտի երկմտէի՞ Բոլինի դրամը առնուլ այդպիսի նպատակի մը համար։ Մէն մի դանդն ազնիւ գործի մը համար . . . ծախս ըրի, և լաւ ըրի։

— Այդպէս աղջիկ մը կողոպտելն ոճիր մ'է։

— Ի՛նչ անուն որ կուզէք տուէք այդ գործին։ Դրամ պէտք էր ինձ։ Եւ ինչո՞ւ արդար դատի մը համար չպիտի զոհէի պատիւս այնքան աղատութեամբ որքան կեանքս զոհելու պատրաստ էի։

— Աւելորդ է վիճաբանիլ այդ խնդրոյն վրայ, քանի որ գոցուած է։

— Ճիշտ է. բայց այդ կէտը կ'յիշեմ միայն ցոյց տալու համար ձեզ թէ ինչ պատճառաւ կ'փափաքէի Բոլինի ընտանեկան հանգիստ յարկ մը գտնել։ Բայց ասա՛ Պ. Վ.օկան — և այս տեղ իր ձայնն մրմունջի պէս ելաւ — անհամբեր էի անմիջապէս գտնել այդպիսի յարկ մը, վասն զի պարտաւոր եմ ուղևորու-

թիւն մը ընել՝ որու վախճանն ինչ է չգիտեմ և ոչ վերադարձը։ Եթէ այս պատճառը չլինէր կ'տարակուսիմ որ ձեզ տեսնելու յօժարէի։ Ո՛ գիտէ, պարագաներն այնպէս կրնան դառնալ որ վերստին իրարու հետ բնաւ չտեսնուինք։

— Արդ եօք ըսել կուզէք թէ դաւի մը մէջ մտած էք։

— Ինչ որ ըսի այդ հասկցէք — ոչ աւելի ոչ պակաս։ Ժամ է արդ ձեզ մնաք բարև ըսել։

Թէև շատ սրամտած էի այդ մարդուն դէմ, բայց չկրցայ մերժել ձեռքն զոր ինձ երկնցուց։

— Մնաք բարեաւ, ըսաւ նա։ շատ հաւանական է որ մէկ երկու տարիէն ձեզի գրեմ և հարցնեմ թէ արդ ճիշտ իմ դուշակութիւնս Բոլինի բժշկութեան մասին կատարուած է։ բայց եթէ իրմէ լուր չստանաք բնաւ դիս գտնելու կամ իմ վրայ տեղեկութիւն խնդրելու ծանրութիւնը մի՛ առնէք։

Այսպէս իրարմէ բաժնուեցանք։ Կառքը կ'սպասէր ինձ, որ դիս պանդոկս տանի։ Ճամբուն վրայ տեսայ այն մարդն զոր Սէնէրի անուանեց Մագարի։ Նշան ըրաւ նա կառապանին որ կանգ առնու և ապա կառքը մտնելով իմ քովս նստաւ։

— Միթէ տեսա՞ք տոքտորը, Պ. Վօկան, հարցուց ինձ Մագարի։

— Այո՛, անոր քովէն կ'գառնամ։

— Յուսամ որ իմացաք ինչ որ փափաք ունէիք իմանալ։

— Իմ ըրած մի՛ շատ հարցումներուս պատասխանը ստացայ։

— Բայց ո՛չ ամենուն։ Սէնէրի չուզած է բոլորին պատասխանել։»

Մագարի ծիծաղեցաւ, և իր ծիծաղն լրբենի էր և հեգնական։ Ես լռութիւն պահեցի։

— Եթէ դիս հարց ու փորձ ընէիք, յարեց նա, շատ աւելի բաներ պիտի յայտնէի ձեզ քան Սէնէրի։

— Ես եկայ տեսնելու Սէնէրին որպէս զի կարելի եղած տեղեկութիւնները ստանամ կնոջս մասին վիճակին վրայ, որ կարծեմ ձեզի յայտնի է։ Եթէ կարող էք դուք ևս հաղորդել այնպիսի տեղեկութիւններ որ կրնան ինձ օգտակար լինել, կ'աղաչեմ խօսեցէք։

— Միթէ հարցուցիք թէ ինչ է այդ վիճակին պատճառը։

— Այո՛, հարցուցի։ Բաւ որ ստատի՛ հարցում մ'էր։

— Անշուշտ հարցուցիք թէ ինչ տեսակ հարուստ։ Այդ չըսած է ձեզի։

— Կարծեմ թէ յատուկ պատճառներ ունէր այդ չյայտնելու։

— Այո՛, պատուական պատճառներ — ընտանեկան պատճառներ։

— Եթէ կարող էք լուսաբանել այդ կէտն, խնդրեմ հաճեցէք բացատրել։

— Այս յարմար տեղը չէ, Պ. Վ.օկան։ Տոքտորի բարեկամն եմ։ Եթէ ըսեմ անշուշտ ետ պիտի դառնաք և անոր վիզէն պիտի բռնէք, և ես պիտի մեղադրուիմ։ Կարծեմ թէ Անգլիա կ'վերադառնաք։

— Այո՛, հիմակ ճամբայ պիտի ելնեմ։

— Տուէ՛ք ինձ ձեր հասցէն, և թերևս գրեմ ձեզ. կամ լաւ ևս, եթէ դիւրահաղորդ լինելու իրաւունք ունենամ, ձեզի պիտի գամ տեսնեմ՝ երբ նորէն Անգլիա ուղևորիմ և այս առթիւ իմ յարգանքս տիկին Վ.օկանի մատուցանեմ։»

Այնքան մեծ էր եռանդս գործին խորը մտնելու որ իմ այցետումս տուի անոր։ Այն ժամանակ կառքը կեցնել տալով դուս ելաւ։ Գլխարկն հանեց և Նենդալի յաղթութեան նշոյլ մը տեսայ իր աչաց մէջ երբոր իմիններուս հանդիպեցան։

— Երթա՛ք բարեաւ, Պ. Վ.օկան։ Կարելի է, վերջապէս, երջանիկ էք որ կարգուած կ'դանուիք կնկան մը հետ որու անցեալն անհնար է թափանցել։»

Այս յետաձիգ սլաքը նետելով — սլաք մ'որ խորունկ զարկաւ ու թունաւորեց սիրտս — Մագարի հեռացաւ։ Աղէկ որ հեռուէն արձակեց այդ խօսքն՝ թէ ոչ կոկորդէն բռնելով պիտի ստիպէի զինք զայն բացատրել։

Իմ խեղճ կինս տեսնելու տենչալով՝ ամեն արագութեամբ Անգլիա վերադարձայ։

(Շարունակելի)

ՍԻՐՈՒՀՈՒՍ ԱՆՄՈՌԱՑԸ*

Անմահական հոտ էր բուրում իմ սենեակ,
Երբ ներս մտայ, 'ւ աչքիս ընկաւ մի համակ:
Սրբատարոի բացի ծրարն գեղեցիկ,
Մէջը տեսայ անուշահոտ մի ծաղիկ:
Հոտոտեցի համբուրեցի աննրման,
Ծաղիկն որ ինձ իմ սիրուհուս համբարձման
Ողջոյն բերում, թարմ ու կանաչ էւ ժրպտուն,
Ինչպէս ինքն է ջրնաղ, կայտառ, զուարթուն:
Թերթիկները նրման ներայ աչերին,
Ա՛յն կապուտակ էւ երկնային աչերին:
«Գերակայիդ եղիր դու քաջ հաւատակ,
«Ինձ մի՛ մոռցիր նոգիս հետդ է շարունակ.
«Գիտցի՛ր անգուր, ես քեզ սիրում եմ սրբտանց,
«Թէ ոչ այս տեղ, իմն ես ուր կեանքն է անանց:
Սիրով կը կրեմ քեզ միշտ իմ սրտիս վերան,
Դու կ'ելնիս անբաղդ կեանքիս թալիսման:
Երբ իմ վերջի ժամը զարկեց ես կ'ասեմ,
Նոյն ծաղիկն իւր տեղիցը չը շարժեն:
Յետոյ թող ինձ հանգիստ դրնեն սեւ տապան,
Եւ սառ հողով ծածկեն իմ մուր գերեզման:
Երբ բոլորեն տարիք գայ նոր համբարձում,
Սա կը ծաղկէ գերեզմանիս վերեւում.
'Ի երբ սիրունիս շիրմիս ելնէ այց ի լաց,
Թող համոզուի, դեռ սրբտումս է անմոռաց:

25 Մայիսի 1887 ամի.

ՏԷ-ԲԷՆԷՆ ՀԱՑ-ԱՐՄԷՆ

* Ծաղիկ է, որ գերմաներէն կոչւում է vergiessmeinnicht անգլիարէն forget me not, այսինքն թեմ մի մոռացիր:

ԱՌ ԴԱՇՆԱԿԱԾՈՒՆ

Երբ աղու ձայնն ճնչեր դաշնակիդ՝
Ոյր վերայ մեղմիկ՝
Սուրային մատուցդ, վսեմ ճաշակիդ
Ցապացոյց փափկիկ:
Երբ օդն դղրդեր բիուն եղանակիդ
Իբրու սոխակիկ.
Ունկնդիրք յապուշ կրքեալ գեղեցկիդ
Ի ձայնէ բաղցրիկ.
Ոչ չգտնէին բան՝ ըստ արժանւոյդ
Տալ ի զով գոդտրիկ:
Զայնիդ՝ որ ճաշտեալ ընդ դաշնամուրին
Լիներ անմեկին,
Սփռելով զիւր շուրջ գրաւիչ, ճեշտին
Նաշամ երկնային.
Առքեզ ճիասքանչ ունկնդիր խմբին
Ոյր տիրեր սրտին՝
Անժոյժ ցանկութիւն քո քրտնած ճակտին
Տալ պսակ անգին.
Բայց պսակ թէ զով տկարանային,
Լինել ուղիղ գին:
Երբ ախոնդ սիրոյ զմուսային բան՝
Երգեիր ոյոր,
Ախորժ ստեղծեալ ի սիրտ ամենայն՝
Սփռեիր բոյոր.
Դաշնակիդ ու քոյդ ձայնիւ միաբան
Թուեիր մոյոր.
Սաւառնիլ յեթերց չքնաղ բուրաստան
Ի կեանս նորանոր.
Կիսաբաց էին աչք եւ արտեւան
Թուեր սոխակ նոր:
Յորժամ խանդիւ վառ սրտեր զգայուն՝
Պատկեր անկասկած՝

Խաբեին տեսնել, վերացմամբ ժպտուն
Խորին զգացմանց . . .
Վերացուցումն տիրած էր իրեն
Երեւեր Աստուած . . .
Լռեցիր սոխակդ եւ ձայն դաշնակին
Լռեց ամեն բան . . .
Բայց յայնժամ իմ սիրտ ջեր լռած միայն,
Խօսէր լռելեայն . . . :

Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

ԹՈՂԹ Ի ՏԱՆԷՆ ԿԻԼԻԿԻՈՑ*

Եւ դարձեալ ըստ պատմութեանց գրոց յորժամ ի Հռովկլայ և ի Սիս էին կաթողիկոսունք Հայոց կամակցութեամբ մերոց թագաւորացն, յայնժամ գայր յԱրևելս անուանի վարդապետ Մխիթար մականուամբ Քոչ կոչեցեալն որ զԱրևելեան Ջաքարէ իշխանի զխնդիրսն յղեաց ի Սիս առ Ա. օծեալն Լևոն և առ կաթողիկոսն Տ. Յովհաննէս, և նոցա ժողովս արարեալ կատարեցին զխնդիրսն, և Արշակ նորին վանական և նորին Մեծն Վարդան, որ էր եկեալ յերկրպագութիւն Սրբոյ Աջոյն և ի տեսութիւն Ա. Հեթմայ թագաւորին, որ ժողովս արարեալ նոցա Տ. Կոստանդին կաթողիկոսին ի ՈՂԷ. թուին մերում ի մայրաքաղաքս Սիս ի սուրբն Սոփիա և գրեցին կանոնս, որ է գլուխս ԻԵ. և յղեալ զհաւանութեան ձեռագիր ի մերոց զայսոսիկ Կիրակոս պատմագիրն գրէ և աշակերտն Վարդանայ, Ներսէս, և Նորայն Եսայի և Նորին Յովհաննէս Որոտնեցի և Նորին Գրիգոր Տաթեւացի որ և եղեն հնազանդ Սրբոյ լուսաւորչի Աթոռոյն, որով եղեն մի հօտ և մի հովիւ, որպէս գրեն Գրիգոր Տաթեւացի և Նորին աշակերտք Պօղոս և Մատթէոս։ Այն Պօղոս որ ի Սիս Նստաւ կաթողիկոս, որոյ գերեզման կայ ի Ս. Աթոռն մեր, զոր ինքն չինեաց ի ՊԿԲ. թուին, որ կայ գրեալ ի փորուածս քարի ի վերայ դրան Աթոռոյս, և յիշատակարան ճաշոցին, զոր ենքն ետ գրել։ Արդ ի ժամանակի նոցա յԵՂՄԻԱԾԻՆ կաթողիկոս ոչ գոյր և ի Սիս գոյր, նոքա ընդՀր կամակիցք և հնազանդ

* Տե՛ս Հոկտեմ. ամսագիր, երես 471։

էին կաթողիկոսացն որ ի Սիս որ և ինքն Պօղոս կաթողիկոս եղև, միթէ կաթողիկոսքն ժողովոյն, վարդապետքն քան զսոսա վեհագոյնք և իմաստունք էին, զիտեմ, չէք կարող ասել այս։ Եթէ յայլ գրոց և կամ յայս սրբոց վկայիցն զպատկառեցար, զոնէ պատկառիս ի ձերոց հարց, այսինքն ի Գրիգորէ վարդապետէ Կեսարացւոյ, որ Նորին իշխանութեամբն պարծիք։ Այլ լռելով զզրարան չարախօսն, որ ապականեն զլսելիս, որպէս զՅուդա, որ էառ պատիւ, աստիճան և իշխանութիւն, բայց մատնեաց զՏէրն իւր նախանձելով իւղոյն Նարդոսեան։ Եւ դարձեալ, անուանեալն կաթողիկոս գրեալ է զմէնջ, չերկնչիս յԱստուծոյ և ի Տէրունական հրամանէն որ ասէ ցեղբայր իւր մոլոս կամ յիմար՝ պարտաւոր լինցի (ասէ) գեհենի հրոյն։ Որպէս և հրէայքն զՔրիստոս, Սամարացի կոչէին։ Ուրեմն պատուիրեսցես ըստ նոցա որպէս պատուիրեցին նոքա առաքելոցն մի յիշել զանունն զայն, Նոյնպէս և Ռափսակ հպարտանալով ի վերայ բարեպաշտին Եզեկիայ մեծաբանէր ասելով, ասացէք ցեղեկիա։ Ո՞չ նոյն զիրք է որ զքեզ ձեռնադրեաց, նոյն և զմեզ. ո՞չ նոյն կարգ է Առաքելոցն, որ ի քեզ, նոյնպէս և ի մեզ լինի թէ մերն աւելի է բանիւ միով, զի Գրիգոր վարդապետն Աջիւն իւրով ետ մեզ դաւազան, նոյն աջիւն ետ մեզ և դաւազան հայրապետական և այս է առաւելն, որ ետ աջիւն զՍրբոյ Լուսաւորչի Աջն եդ ի վերայ գլխոյ իմոյ։ Արդ այսուհետև անուանեալն ոՐն եղեւ, ո՛ Փիլիքս և Փիլիդէս, և ո՛չ թէ պարծիմք ինչ վերագրեցելովիս, քաւ լիցի, բայց եթէ պարծիմք, ունիմք տեղի պարժանաց, վասն զի Ս. Լուսաւորչի Աջն, պարծանն պարծանաց, առ մեզ է և Ս. Երուսաղեմ *, և ևս աղնուական և գերազրական իմաստութիւն կայ ասա ի պարծանս Ազգիս Հայոց, նախ գրչութեան արհեստն և երկրորդ երաժշտութիւնն, ահա արհեստն գրչութեան յայտնի է ընդ ամենն տեղիս մանաւանդ բազում գրեանք, որ առ ձեզ են, և երաժշտութիւնն յայտնի է, զի ընդ ամենայն աշխարհ ցրուեալ է, որպէս Ասպահանայ Խաչատուր վարդապետն առի Վասիլ եպիսկոպոսի էառ զպաշտամունս և զկարգ քահանայութեան, որպէս առին Սաղմոսն ի Մշոյ և խաչն ի Սսոյ, զինչ երկարեմք, որ ձեզ և ամենեցուն յայտնի է, և դարձեալ գրեալ է վարդապետն քոյ Մովսէս կաթողիկոսն՝ Մե-

* Յայտ է թէ Երուսաղէմ ի սկզբանէ անուն թեմ եղած է Սսոյ կաթողիկոսական Աթոռոյն։ Ն. Խ.

ծի վարդապետին Տեառն, Գրիգորի Կեսարացւոյն, եթէ խնդրէ մեր մայր Ս. Եկեղեցի զմիաբանութիւն և միոյ հարսին մի փեսայ Բ. և Գ. ընդդէմ կանոնացն է, զրեալ էր թէ ոչ թէ վասն հարստութեան իմոյ ասեմ, քանզի ես կամաւ իմով հրաժարեալ յիմում բաժնի, բայց զորս զուք ուր կամիք և ուր հաճեսջիք, անդ հաստատիցէք (և այլն)։ Այս ճշմարիտ է ասացեալդ միոյ հարսին մի փեսայ, և աւելին ընդդէմ կանոնացն է, ստոյգըն և ճշմարիտն այս է, բայց զերկրորդն զուք արարիք, զի ի Սրբոյն Գրիգորէ մինչև ցՅովսէփ կաթողիկոս, չորրորդ կաթողիկոս է, սոքա ամենեքեան միոյ հարսին մի փեսայ էին, այլ երկրորդելոյն պատճառ զուք եղէք։ Արդ ո՛վ եղև ընդդէմ կանոնաց, մեք թէ զուք, որպէս ի բաղում տեղիս Գրիգոր վարդապետն ապստամբ կոչէր զքեզ, որպէս արդ Յակոբ արեղայդ որ ինքնին լուաւ ի Գրիգոր վարդապետէն, որ և այժմ վարդապետ անուանեալ է, զոր և Մովսէս կաթողիկոս գրեալ էր յիւր թղթոջն թէ, «Տէր վարդապետ, իմոյ զօրութիւն ի ձեռին քո է» և թուղթն այժմ առ մեզ է։ Ասացեալ ես թէ «ընդէ՞ր ձեռնադրութիւն առնես ի մերում վիճակի, ուստի հանդերձեալ եմ որոշել» և այլն։ Ահա սմա պատասխանի որպէս հրամայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս, Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ, որպէս նախնի վերհագոյն կաթողիկոսունք մեր, որ գլխաւոր վարդապետք էին և կանոնաց հմուտ, և ձեռնադրեալքն այսորիկ էին, նախ Խաչատուր կաթողիկոսն՝ զԱկնայ Մըկրտիչ եպիսկոպոսն, Տիրատուր, որ կաթողիկոս անուանեցաւ (Անկիւրիոյ եպիսկոպոս) ձեռնադրեաց զՍարգիս եպիսկոպոսն Կ. Պոլսոյ պատրիարք, և յետ այնորիկ Ագարիա կաթողիկոսն զՄինաս վարդապետն Կարնոյ, զՅակոբն Եդեսիոյ, զՎասիլ եպիսկոպոսն Ամասիոյ, զմիւս Խաչատուր եպիսկոպոսն Յոպպէի, զՄկրտիչ վարդապետ Քարբերդու, զմիւս երկայն Մկրտիչն Բաղեշու, զՊողոս վարդապետն Տարօնոյ, յետ այնորիկ Յովհաննէս կաթողիկոսն զԳալուստ եպիսկոպոսն Մէրտինայ, զՄինաս վարդապետն Երզնկայ, զԱլիքսանոս եպիսկոպոսն Մարաշանու, զերկու Յակոբն Անկիւրիոյ, զԳրիգոր Կեսարացի վարդապետն Պաղատաւու, զՄեսրոպ վարդապետն Շեհայ, զԹորոսն Եաֆայու, զԼուկաս եպիսկոպոսն Դանեայու, զԴաւիթ եպիսկոպոսն Կեսարիոյ, որ այժմ առաջնորդ է, և յետ այնորիկ Պետրոս կաթողիկոսն, զՍարգիս եպիսկոպոսն և զՄարտիրոս վարդապետն Տրօնոյ, զՄաղաքիա վարդապետն Եդեսիոյ, և յետ այնորիկ Մի-

նաս կաթողիկոսն, զՍարգիս եպիսկոպոսն Մէրտինայ, զԴուկաս եպիսկոպոսն Երզնկայ, զՆերսէս վարդապետն Սեբաստիոյ, զՍարգարէ եպիսկոպոսն Եւդոկիոյ, զՄարգարէ եպիսկոպոսն Սուլու Մանաստրու, ահա սոքա մեզ յայտնի են որոց ականատես եղաք, բայց Ազարիա կաթողիկոսն և Պետրոս կաթողիկոսն որք վասն Սուրբ Երուսաղիմայ պարտուցն գնացին մինչև ի Հին Զուղայ որքան եպիսկոպոս օրհնեցին յանուանէ ոչ գիտեմք *։

Ապա ընդէր ոչ ունիմք իշխանութիւն ձեռնադրելոյ, այո՛ ունիմք իշխանութիւն ըստ վերագրեցելոյս, և երկրորդ ըստ Ներսէսի Լամբրոնացւոյն, որ գրեալ է ի ճառն աստիճանաց թէ կաթողիկոս անուն թարգմանուի ընդհանրական, և սին առաւելութիւն զառաւելութիւն պատուոյ քան զԱրքեպիսկոպոսականն զի ո՛չ թէ յիւր վիճակն միայն, այլ ընդ ամենայն տեղիս, ուր ազգն իւր համասեռքն են, ունին իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ զՄիւռոն, վասն որոյ և թարգմանին կաթողիկոսք։

Արդ՝ դո՛ւք զոր մեզ ասէք, ընդէր ո՛չ հետևիք ասացելոց ձերոց, որ զԵրիացի Մարգար երիցու որդին, զՍիմէօնն օրհնեցիք, ևս առաւել զԵրուսաղիմայ հայրապետն, որ պարծանք է մեզ որ բոլոր թէմդ չարժէ զնա ըստ Առաքելոյն։ Ուստի ասեմ ըստ Աւետարանին, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զփուշ յականէ եղբօր քոյ։ Ասացեալ ես թէ, «զինչ օգուտ եղև քո օրհնելն և մեր բանադրելն։» Արդ եթէ բանադրես զսոսա, թէ ի Սիս էք օրհնեալ, և ի Սիս օրհնեալքն եթէ ընդ բանադրանօք են, ուրեմն բազումք և ի ձէնջ, թէ՛ ի կենդանեաց, թէ ի մեռելոց, ընդ բանադրանօք գտանին որ ի Սիս են օրհնեցեալ, բանադրեա՛ ուրեմն զվանեալքն ի հող, և զկենդանիքն ի վերայ երկրի, զի թերևս առ ի նախանձուէ տոչորեալ սիրտ քո պաղեսցի։ Ահա լցաւ նզովիւք ըստ ժամանակին Վահանայ և Ստեփանեայ, և դու նմանեցար չորրորդ գազանին որ ուտէր և մանրէր և այլն, և դատարկարծեմ վեհագոյն քան զնախնիսն քոյ։

Դարձեալ գրեալ ես Ս. Երուսաղիմայ պատրիարքին թէ, «Մեզ դատաստան արա՛» մեր մեղքն այն է եպիսկոպոս եմք

* Ինչպէս կ'տեսնուի՝ կաթողիկոսունք Սոյ վասն պարտուց Երուսաղեմի, որ իրենց թեմն էր, հանգանակութեան գնացած են մինչև ի Հին Զուղայ։

Ս. Խ.

օրհնեալ։ Արդ մեր օրհնելոյն դատաստան պիտոյ է և ձեր անդատաստան բանից դատան չէ՞ պիտոյ, վասն Համաղասպ եպիսկոպոսին, զոր զանազան տանջանօք սպանանել տուիք, և զՃանճիկ եպիսկոպոսն մարդակերաց երկրին ականջատ առնել տուիք, զՍելևկիացի Արեղային զծածուկ անդամն կտրել տուիք, և զԴառնեցի Արեղայն ի հաւատոյ ուրացուցիք, զՋաքէոս Արեղայն ֆռանկ առնել տուիք, նոյնպէս զիսահակ կաթողիկոսն և զՊողոս վարդապետն կրօնափոխ արարիք և ազգի ազգի չարչարանօք ի հաւատոյ ուրացուցիք, և զԼեհու երկրին զայնքան քրիստոնեայսն անհաղորդ, անմաս և անթաղում թողուցիք, և դեռ ևս այնպիսի բանից դատաստան չկայ, այլ միթէ մեզ միայն կայ։ Դարձեալ գրեալ ես թէ «յաղթահարեցաւ Սիմոնականն ախտին ըստ անուանակոչութեան իւրում։» Արդ եթէ ես ի նոցանէ կաչառս առի՝ զայն Աստուած թող քննէ և դատէ, իսկ եթէ ի զուր զրպարտես զմեզ՝ Տէր տրասցէ դատաստան ընդ մեզ և ընդ ձեզ։ Յորժամ եկին քո Արեղայքն հրաւիրակ ի Կ. Պոլիս, և մեք անդ էաք, որք փոքրիկ Աւետարան մի առին հարիւր դահեկանի, և զդինն Պոլսեցւոց վճարել տուին, ասելով թէ «մեզ պատիւ և վարկ է» նոյնպէս և մեք զԱնտոն երէցն առաքեցաք ի Հալէպ հրաւիրակ։ Ընդէ՞ր ստակ մի ո՛չ պահանջեաց ի նոցանէ։ Արդ՝ ո՛ եղև Սիմոնական, ասէ՛, ասա՛ ինչ։ Գրեալ ես թէ «ըստ անուանակցին իւրում»։ մեր անունը Սիմոն չէ այլ Սիմէոն, և եթէ Սիմոն լինէր, զինչ զլաս էր անուանակից լինելն։ Ահա Առաքելոյն Պետրոսի ևս ասաց Տէրն մեր, Սիմոն որդի Յովհանու, և ահա դու անուանակից ես Առաքելոյն Փիլիպպոսի, արդ զինչ չահ է քեզ անուանակից լինելն առանց գործոց, ըստ հօրն Անտոնի, վա՛յ այնոցիկ որոց անունն մեծ է քան զգործն։ Դարձեալ գրեալ ես թէ «ի կանոնս գրեալ է եպիսկոպոս կամ այլ ոք միմիանց վիճակն մի իշխեսցեն» այդ այդպէս է, սակայն կանոնն եպիսկոպոսաց վասն է, իսկ կաթողիկոսաց համարձակութիւն տայ Ս. Ներսէս Լամբրոնացին, ըստ վերագրելոյն, բայց վասն Թորոսին, որ ասացեալ ես, մեք յայնմ ժամանակի ընդ Գրիգոր վարդապետին գնացաք ի Կ. Պոլիս, հանդիպեցաք ի քաղաքն Անկիւրիա, և անդ վախճան եղև Ղուկաս եպիսկոպոսին, միաբան և միաձայն ժողովուրդն աղաղակեցին առ վարդապետն նաև առ մեզ թէ զԹորոս արարէք Առաջնորդ, զի սա կարող է կառավարել զվանքն մեր և զայս չափ պարտքն յետ այնորիկ վարդապետն հայր վանից եւեթ եղ զնա, մեք զը-

նացաք ի Կ. Պոլիս, և ի դառնալն մեր կրկին հանդիպեցաք անդ, վերստին քահանայք և ժողովուրդք եկին միաբան առ մեզ զաղաչանս, պաղատանս առնելով՝ խնդրեցին ի մէնջ թէ եպիսկոպոս ձեռնադրեա զնա, ո՛չ թէ ինքեանք միայն, այլ և այլազգիք ևս, որ պաղատէրք էին աղաղակեցին և երբեմն ահ և երկիւղ տալով ճանձրացուցին, բայց այսու ամենայնիւ ո՛չ առի յանձն, այլ ասացի թէ Էջմիածնի է թէմն, և վարդապետն լինի թէ նեղանայ, քահանայք և ժողովուրդք միաբերան ամենեքեան ասացին թէ, մեք զքեզ գիտեմք և զէջմիածին գիտեմք և վարդապետին խօսքն ի վերայ մեր, յետ այսպիսի բանից նոցա ձեռնադրեցաք զնա եպիսկոպոս։ Արդ եթէ ուղղադատ ոք էիր, զԱնկուրիոյ քահանայս և ժողովուրդսն բանադրիէր ըստ արժանոյն. որք յանձն առին զպատասխանատուութիւնն որոց և Գրիգոր վարդապետն նեղացեր է, թէ առանց իմոց հրամանի բան արարիք, ես Էջմիածնի փոխանորդ և երեսփոխան եմ։ Յետ քանի ամսոյ Շահին Զէլէպլին և Խօճայ Երեմեան կը հանդիպին յԱնկուրա, և առեալ զԹորոսն տանին առ վարդապետն և հաշտեցուցանեն, իրաւունք և բաժին առնեն ի նմանէ Էջմիածնի, և ապա նուիրակ և փոխանորդ արարեալ է իւր, ես և թուղթին իշխանութեան ի ձեռս նորա տուեալ և առաքեալ ի կողմանս Ռումէլիի և Անատոլիի որ տարի ու կէսէն աւելի ես նուիրակ լեալ և առ ինքն բերեալ, որպէս այսմ բանիս գիտակ է նուիրակն քո Մինաս վարդապետն որուն հանդիպեալ է, և յետ այնորիկ օրհնութեան նամակաւ յղեալ է յԱնկուրիա Առաջնորդ, թէ ես Էջմիածնի փոխանորդ եմ, այսուհետև չունի իշխանութիւն այլ և այլ ասել դմա։ Եւ յորժամ գայ յԱնկուրիա, տեսանէ այլ և այլ վարդապետս, յետ որոյ և մեք թուղթ առաքեցաք նմա թէ զքեզ աղաչանօք օրհնել ետուն, զվարդապետին և զէջմիածնի խօսքն ի վերայ ինքեանց առին, և այժմ մինչ այսպէս արարին քեզ, ել և եկ առ մեզ և ի թէմս մեր զի առաջի քոյ է վիճակն մեր յորն և հաճիս։ Ուստի եկն նա առ մեզ և մնայ ի Ս. Աթոռս մեր։ Արդ այսուհետև ինչ իրաւունք մնայ քեզ, որ թուղթ յղես մեզ վասն նորա և մեղադրես զմեզ, թէ եպիսկոպոս ես օրհնեալ, զի եթէ օրհնեմ, զինչ վնաս ի նմանէ, ո՛չ ապաքէն ի մեր թէմն է, զի ի կողմանէ հօր ի Գամրայ երկրէն է և ի մօր կողմանէ ի Մէլիտինայ, զի հարբ և մարբ իւրով ի թէմէս և ի վիճակէս մերմէ է, քեզ չի՞ վոյթ է որ թուղթ և մեղադրանք յղես ի կողմանս այս։ Արդ՝ հրամայէ Քրիստոս Աւե-

ասարանին, օրհնեցէք զանիծիչս ձեր և Առաքեալն ասէ օրհնեցէք և մի անիծանէք, մեք Քրիստոսի հրամանն կատարեցաք ի յօրհնելն մեր զնա, և դու զհակառակն նորին գործեսցես յանիծանելն քո, և ո՛չ այսչափ միայն, այլ և անսպատեհ յանդուգն բանս գրեալ ժպրհիս ի քարտեղի քում, ըստ Սենեքերիմայ Արքային Ասորեստանեայց, որ առաքեաց զՌափսակ առ Արքայն Եզեկիա ասել թէ, «այսպէս ասէ Արքայն Ասորեստանեայց թէ յո՞ յուսացեալ ես» և այլ ըստ նմին օրինակի և դու ասես «յո՞ յուսացեալ նշխահեցիր զիս· թերևս յուսացեալ իցես ի ցուպն եղէգնեա ի ջախջախ եգիպտացին յոր թէ ոք յենուցու ընդ ձեռըն ելանէ»։ Այսմ ասացելոցդ իբր թէ զմեզ նմանեցուցեալ ես որ անդէպ է բնաւին, զի թէպէտ Ռափսակ խրոխտանալով եկն առ Եզեկիա՝ ասելով զհպարտութեան բանս ըստ քեզ թէ, «ո՞ւր է Աստուածն քաղաքին Սեփորիմ, միթէ՞ փրկեցին զՍամարիա ի ձեռաց իմոց», իբրև զայս լուաւ Եզեկիա պատառեաց զհանդերձս իւր և եկաց յաղօթս ի տուն Տեառն, լուաւ ամենալուր ունկն Աստուծոյ, և առաքեաց հրեշտակս ի բանակն Սենեքերիմայ և եհար ի բանակէ նոցին հարիւր ութսուն հինգ հազար, և զայլն, որում գիտակ էք թէ յաղագս ո՞ր էր պատճառ, ըստ այսմ սարասի և դու իբրև զՌափսակ հպարտացեալ ամբարտաւանութեամբ ի վերայ մեր ասելով ի քարտիզիդ «ահա, զԱղուան, զԱղթամար, զԿ· Պոլիս և զԵրուսաղէմ հնազանդեցուցեալ եմք և դու յո՞ յուսացեալ ես որ ո՛չ հնազանդիս մեզ»։ Արդ յառեա զակն քո և տես թէ նա զինչ կրբեաց ի գիշերին այնմիկ ի հրեշտակէ անտի, չերկնչիս արդեօք դու յԱստուծոյ, զուցէ մեծարանութեամբդ այդոսիկ նմին նըման լինիցիս, լուր այժմ և ունկնդիր դու խրատուց Դամաղիէլի օրէնս ուսուցչին որ առ հրեայսն վասն Առաքելոցն, «եթէ ի մարդկանէ է (ասէ) կործանեսցին որպէս զԹևդաս և զՅուդա, իսկ եթէ յԱստուծոյ իցէ, զուցէ Աստուածամարտ գտանիցիք, նոյնպէս և դու զդոյշ լեր, յընդունայն մի աշխատիր, չբաւականացար և չկշտացար ի հակառակութենէ, որպէս հաւաստեալ ըսեմք զարարեալ աղմուկդ և զխռովութիւնդ ի Բաղէշ առ ի վարդապետսն և ազգի ազգի նեղութիւնսդ զորս հասուցիր ժողովրդեան, և հաղիւ մազապուրծ ղերծար և փախեար ի նոցանէ և անկար ի Վան, և անդ ևս զրաղում խռովութիւն արարեր ընդ Մոկացի Յովսէփ վարդապետին, անտի փախստական ի Լիմ գնացիր, և անտի յԱրճէշ, և անդ ևս այնչափ կռուեցար

ընդ եպիսկոպոսաց տեղւոյն, որք ըմբռնել կամեցեալ են զքեզ յորոց ձեռաց ևս փախուցեալ հապիւ հաղ զերծար, թողում զկագն, զոր ընդ Կարնոյ Մինաս վարդապետին արարեր։

Արդ՝ զինչ եղև քեզ, և էր վասն այսքան աղմուկք և խռովութիւնք ի քէն յառաջ գան, եթէ չերկնչիս յԱստուծոյ, պատկառէիր թերևս ի մարդկանէ, զինչ չահ և օգուտ եղև քեզ յայսցանէ և յետ այսչափ աղմկաձգութեանց և խռովութեանց ընդ ամենայն տեղիս չիշատացար այսու ամենայնիւ, նաև կամիս յԱչխարհս մեր ձգել զնոյն աղմուկ և խռովութիւն։

(Մնացածը գալ անգամ)

ՓՇՐԱՆՔ

Բարձր իմացականութեանց համար սէրը պարտի միայն լինի ինչ որ է հովը ծովուն համար, մդիչ զօրութիւն մը։ Հովն է որ ալեկոծելով ծովն՝ կ'ընծայէ անոր անեղ ու շքեղ կերպարան. ապա կ'դադրի եւ ծովը կ'մնայ։ ՏԻՄԱ ՈՐԴԻ

Գեղեցկութիւնն, ինչպէս ամեն մեծութիւն։ լոկ արբանեակներ կ'ուզէ։ Արդ՝ անմնան գեղեցկութեամբ կնկան մը համար շատ գեղեցիկ մարդ մը խնկարկու մը չէ եւ ոչ սիրահար մը, այլ հաւասար մը, այլ թշնամի մը։ ՆՈՅՆ

Հանճարեղ մարդոց համար շատ աւելի մեծ այլայլութիւն կը պատճառէ մտաց ծնունդն քան թէ լոկան ու մանկանացու էակի մը նոր արեւն, որու հեղինակ կրնայ լինիլ յետին բեռնակիրն անգամ։ ՆՈՅՆ

Արքեցուրիւնը մխիթարութիւն չէ, այլ տրտմութեան յետադգումն, տրտմութիւն՝ որ վերջէն աւելի ծանր ու կծու կերպով երեւան կ'ելնէ։ ՆՈՅՆ

Երէ դար մ'անցած տեւէ երջանիկ սէրը, լոկ վայրկեան մը տեւած կ'երեւի։ ԲՐՕԲԷՐՍ

Երկու էակներու սէրն այս աշխարհիս մէջ ստէպ մենաշնորհ մ'է որով դառն վշտեր իրարու կ'հաղորդեն։ ՍԷՆԴ-ՊԷՕՎ

Կան մարդիկ որոց առջեւ կին մ'այնքան գեղանի կ'երեւի որքան որ նէ խոշոր աղամանդներով զարդարուած է։

ՀՕՐԱՍ ԼԷՍՕՆ

Ամեն արժանիք ոգիի եւ աղամանդի մէջ դնող կիրը շատ հեռի չէ պատիւն ալ անուրդի դնելէ։ Գ

Դժուարին չէ կանանց համար ըսել ինչ որ չեն զգար, եւ նուազ դժուարին է մարդոց համար ըսել ինչ որ կ'զգան։
ԼԱՊՐԻՅԷՐ

Դատապարակել մարդ մը լոկ պատրաստել է անհատ մ'որ իր ետեւէն ոչ ինչ չթողուր. դատապարակել կին մ'ապագայ սերունդներ յարդարել է։
ԷՏ-ԼԱՊՈՒԼԷՅ

Զկայ խաղաղութիւն չարասէր յիմարներու հետ. երբէ պահ մը խոնարհ երեւիս, կ'կարծեն թէ առ ահի այդպէս կ'շարժիս։
ՎՕԼԴԵՐ

Ամեն հշմարտութիւն ինչպէս ամեն արժանիք իրրեւ թշնամի ունին իրենց ժամանակակիցները։ ՆՈՅՆ

Ժողովուրդը միշտ կ'սիրէ աւելորդապաշտութիւն եւ հնամարտակութիւնը։ ՆՈՅՆ

Ծոմ պահել ու աղօթել պօնգի առաքինութիւն է. օգնել եւ լուսաւորել քաղաքացւոյ առաքինութիւն։ ՆՈՅՆ

Կան շատ պարկեշտ ձեւացող մարդիկ որ տուն մը կրակի տալու պատրաստ են երբէ իրենց կերակուրն եփելու ուրիշ միջոց մը չգտնեն։ ՆՈՅՆ

Այսպէս սուտ քահանաներէ կ'խաբուին ողորմելի ապուշները։
ՇԷՔՍՊԻՐ

Մարդ մարդու հետ պարտի լինիլ եղբայր, բայց կաւը կաւէն կ'զանազանի արժանապատուութեամբ, թէեւ երկոքին մի եւ նոյն փոշիէն լինին։ ՆՈՅՆ

Կան անկումներ որ աւելի նպաստաւոր միջոցներ են բարձրացման։ ՆՈՅՆ

Բաղդը ստէպ կ'տանի նաւահանգիստ շատ անդեկ նաւեր։
ՆՈՅՆ

Ժամերու արգանդին մէջ կան շատ դէպքեր որ ծնունդ պիտի առնուն։ ՆՈՅՆ

Սկիւթացիք իրենց գերիներուն աչքը կ'փորէին, որպէս զի կաթագը լաւ ծեծեն եւ ապիտ անդին չնային։ Կան նաեւ մարդիկ որ

սոխակին ձայնը կ'հանեն որպէս զի լաւ երգէ։ Միթէ չէ՞ կարելի ըսել որ հաճանմամբ խորհուրդ մ'է որ կ'ուղղէ կանանց տրուած դատիարակութիւնն։ Կարծես թէ տակաւին մարդիկ կ'վախնան որ լաւ տնտեսուհիները պիտի վերնան՝ եթէ կանանց իմացականութիւնը կայր չմնայ։ Տ. ՍԴԼԷՐՆ

Մարդու կեանքը կ'օրորուի, ճօճանակի մը պէս, վշտի եւ տաղտուկի մէջ. ատոնք են իրօք իր երկու վերջին տարրները։ Մարդիկ այս վիճակը տարօրինակ կերպով բացատրած են. ամեն տեսակ տանջանքի եւ ատելայանքի կայանն ընելէ ետեւ դժոխքն, ի՞նչ մնացած է երկնից համար, եթէ ոչ տաղտուկ։

ՇՊԵՆՀԱՒԷՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ*

ԺԵ.

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆՔ

Քանի մանուկը կ'մեծնայ և բնաշդի կապերէ վոքը առ վոքը կ'աղատի, իր եսասիրական զգացմունքը կ'նուազին և մարդկային համակրութիւնը կ'զարթնու իր սրտին մէջ. ժամանակ մը լոկ իր խաղալիկները, կենդանիները կ'սիրէր՝ իրեւ ըզբօսակից ընկերներ, այնուհետև կ'կապուի յատկապէս անձերու և իր համակրութիւնը հազար տեսակ շնորհալի և չքնաղ միջոցներով անոնց կ'յայտնէ։ Ահա այն ժամանակ կ'հպատակի նորանոր զգացումներու որ մարդս դէպ իր նմաններուն մղելու բնական յօժարութենէ կ'ծագին։

Այս ձկտումն՝ զոր կարելի է նկատել բարոյական կամաց առաջին արտայայտութիւնը, կ'կոչուի ընկերային կամ հոմակրական յօժարութիւն։

Սահման. — Ընկերային յօժարութիւնները կամ միտումները կարելի է այսպէս սահմանել։ Այն զգացմունքն որ մեզ կը դրդեն ըստ կարի նպաստել այլոց օգտին, անոնց վիճտերուն

* 1889 Տե՛ս Դեկտեմ. ամսագիր։

և ուրախութեանց մասնակից լինել ամեն անդամ որ առիթը պատահի։

Մէրէ բնակոն է համակրութիւնը մարդուս համար. ինքնասիրական վարդապետութիւնը։ Կան իմաստասէրներ և բայոյադէտներ որ կը քարոզեն թէ մարդ էապէս ինքնասէր է, այսպէս զանի աւելի ստորին աստիճանի մէջ դնելով քան կենդանին որ ստէպ ընկերականութեան սրտաշարժ օրինակներ կ'ներկայէ։ Իրօք՝ կան կենդանային ճշմարիտ ընկերակցութիւններ որոց մէջ կ'տիրեն ներդաշնակութիւն, միաբանութիւն և կարելի է ըսել իսկ՝ ընկերսիրութիւն։ Վկայ են թռչուններն և միջատներն որ ընկերաբար կ'ապրին, և մի քանի կաթնաբերներ, ինչպէս քարայծներն, որ՝ երբ կ'արածին իրենց մէջէն մի քանին իբրև դէտ կը կարգեն որպէս զի ծանուցանեն խմբին վերահաս վտանգ մը, և այս պաշտօնն զարմանալի անձնուիրութեամբ և խելքով կ'կատարեն դէտերը։

Բայց՝ որովհետև մարդ ամեն ինչ աւելի ուժգին կ'զգայ քան կենդանին, որովհետև իր իմացականութիւնն աւելի հնարագիտութեամբ կարող է օգտակար լինիլ իրեն, ոմանք ելան ըսին որ մարդս թէ իր խելքն և թէ զգայնութիւնը ըստ իր անձնականութեան կ'ծառայեցնէ և թէ շատ աւելի եսասէր է քան ամեն կենդանի։ ՀՈՊՍ,[1] ԼԱ ՌՕՇՖՈՒՔՕ,[2] Ժ. Ժ. ՌՈՒՍՕ[3] համարձակ կ'ըսեն թէ՝ Մարդ գայլ մ'է մարդուն համար, թէ ընկերութիւնը պայմանագրութեան մը ծնունդն է, և մեր գործերուն միակ շարժառիթն է մեր յատուկ հաճոյքն, թէ, ի մի բան, բոլորովին զուրկ ինք ազնիւական զգացմունքէ։» Հետևապէս այս հեղինակները կ'ուրանան բարութիւն, վեհանձնութիւն, նոյն իսկ գթութիւն զորս կ'նկատեն իբրև պատրուակներ որ նպատակ ունին մեր շահերուն ծառայել, մեր փառասիրական խորհուրդները դիւրել, գալիք դժբաղդութեանց առաջն առնուլ։

Բայց կան նաև իմաստասէրներ որ հակառակը կ'պնդեն՝ աւելի զօրաւոր փաստերու վրայ յենլով։ Բարութիւն, առատա-

[1] Անգլիացի իմաստասէր (1588-1679) քաղաքական բռնակալութեան պաշտպան, ինչպէս նաև նիւթականութեան։

[2] Պարսատիկ կռիւներուն մէջ կարևոր դեր ունեցած է Մաղարէնի դէմ. հեղինակն է Յիշողութիւններ և Աւանդներ. (1513-1680)։

[3] Իմաստասէր, ծնած է ի Ժընեվ (1712-1778) հեղինակ Նոր Էլոէզ Լէ կամ դարուխիներ, Էմիլիոն դաստիր և այլն երկերու։

ձեռնութիւն, գթութիւն ինքնին գոյութիւն ունին, կ'ըսեն. ասոնք ոչ շահու, ոչ ինքնասիրութեան, ոչ փառասիրութեան, ոչ խոհականութեան արդիւնք են, և եթէ երբեմն հաճոյք յառաջ կ'բերեն, հաճոյքը չէ կարող ջնջել մարդկային այդ զգացմունքը։ Եթէ հաճոյքն անտես առնուած է, եթէ գործի մը նըպատակն այն չէ եղած, այլ միայն իբրև յաւելուած հասած է, թէև անյուսալի, գործողութիւնն ոչ նուազ շահանդրութենէ զերծ կ'համարուի և իր բարոյական արժէքը միշտ կ'պահէ։ Մինչդեռ եսասէրն լոկ իր հաճոյքը կամ շահը կ'փնտռէ բարիք ընելու ժամանակ, վեհանձն մարդն վերահաս հաճոյքը պարզապէս կ'ընդունի իբրև արդիւնք իր բարութեան և կարող է զայն անմեղօրէն վայելել՝ առանց երբէք ամբաստանուելու իբրև եսասէր։

Բաց աստի՝ համակրական միտումներու գոյութեան լաւագոյն ապացոյցն այս է որ՝ ընդհանրապէս մարդիկ տրամադրութիւն ունին համախմբիլ, դիրար փնտռել, իրարու պատմել իրենց ցաւն և ուրախութիւնն, մինչև անդամ անգոյ էակներու համար համակրանք տածել՝ ինչպէս են վէպի կամ թատրոնի միջոցաւ ներկայացուած անձեր որոց հետ յաժարակամ կը ծիծաղինք կամ կ'լանք։ Միայնութիւնը ծանր է մարդուն և եթէ չունենայ իբրև ընկեր իր նմանին, համակրական յարաբերութիւններ կ'հաստատէ մինչև անդամ ամենէ ստորին կենդանիներու հետ։ Ի վերջի՝ մեր ուրախութիւնները միթէ չեն կրկնապատկիր մեզի յայտնուած համակրութեամբ, ինչպէս որ մեր վիշտերը կ'ամոքին երբ վշտակիցներ գտնուին։ Ուրեմն կան մարդկան մէջ ճշմարիտ սիրայօժարութիւններ որ անձնական դրոշմ չունին և շահանդրական չեն։

Մանկանց ընկերային զգացմունքը։—Ասինք՝ որ մանուկը կանուխէն ցոյց կ'տայ դինք շրջապատող անձերու համար համակրութիւն։ Խաղի համար ոմն սուտ լաց ու ծիծաղ չէ եղած որպէս զի մանկան լացն ու ծիծաղը գրգռէ։ Ո՛վ չէ դիտած թէ ինչպէս մանկանց և մասնաւորապէս փոքր աղջկանց մէջ բարեկամական կապեր կ'զօդուին իրենց բուռն զգայնութեան պատճառաւ։ Բայց պէտք է զգոյշ լինիլ և մեծ կարևորութիւն չընծայել անոնց սիրալիր զգացումներու միշտ վառվռուն արտայայտութեան, որ որքան իրենց ֆիզիքական աշխուժութենէ, արագաթռիչ երևակայութենէ, նոյնքան իրենց սիրոյն սասակութենէ յառաջ կ'գայ։ Այդ արտայայտութիւնն անպատեհ և սակայն անդդաստ է։ Տիկին

Կիզо իր Նամականի Դասդիարակութեան վրայ երկին մէջ գրած է մի քանի տողեր ճշմարտութեամբ լի։ — «Լուիզ, կ'ըսէ նէ իր փոքրիկ դստեր մասին խօսելով, չգիտեմ ինչ խանդով կ'գայ վիզս կ'փաթթուի և չկշտանար ինձ համբոյրներ տալով։ Կարծես թէ իմ բոլոր սրտովս չպիտի կարենամ պատասխանել իր վառվռուն գգուանաց։ Բայց փոքրիկն կ'հեռանայ իզէ և մի և նոյն թեթևաշարժ աչխուժով կ'երթայ իր պէպէկը համբուրելու կամ ճամբուն վրայ հանդիպած թիկնաթոռին թևը։»

Արդ՝ հարկ է գիտնալ թէ դաստիարակն ինչպէս պարտի գործել այդ մանկային միտումներու հետ և ինչ օգուտ կրնայ քաղել անոի մանկանց բարոյական օգտին համար։

(Շարունակելի)

Ա. Ո.

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՆՈՐԱՊՍԱԿ ԱՄՈՒՍ, ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՄԱՐԻՅԱ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

Բերկրապարար խնդութեամբ շնորհաւորեմ Ձեր նանդէս,
Մաղթելով միշտ ի յերկնուստ գեղածիծաղ ասպարէզ.
Ուրախ, խաղաղ ընթանայք տածելով սէր բոցակիզ,
Հրճուանք, բերկրանք, խինդ եւ կեանք մընան յաւէտ Ձեզ ի տես։

Ամուսնական Ձեր նոր կեանք լիցի ընդ միշտ անսասան,
Ցանկ խնկաբոյր ծաղկեսցի Ձեր նորակազմ դարաստան.
Ձերդ շառաւիղ ուռճացեալ մեծի զարմին Կիւլպէնկեան՝
Ցաւերժասցին Ձեր անուանք ի տարեգիրս Հայկազեան։

30 Հոկտ. 1890 — ԽՈՍՐՈՎ ԳԱՀԱՆԱՑ

Կ. Պոլիս, ի Բատրքէոյ — Ս. Թագաւոր Եկեղեցւոյ

ՀՈԼԱՆՏԱՑԻ ԹԱԳԱՒՈՐՆ

Ուիլիամ Գ. Հոլանտայի թագաւորն՝ որ վեց ամիս է ի վեր մահուան անկողինն էր, իր վերջին շունչը փչեց ներկայ ամսուն 11ին։ Նա ծնած է 1817ին և գահն ելած 1849ին։ Ի սկզբան հին վեհապետներու տիպար մ'էր Ուիլիամ՝ իր պաշտօնին կարևորութեան անտարբեր և իր հաճոյից դերի։ Պարագաները փոխեցին իր բնաւորութիւնն. ամեն անձնական ազատութիւն վայելելու հակամէտ՝ կ'ուզէր որ իր հպատակներն նոյնը վայելեն։ Էապէս սահմանադրական թագաւոր մ'եղաւ, ազգային ժողովին հլու, աղատական գաղափարներու կուսակից, թէև քաղաքական խնդիրներու վրայ չէր յայտնէր բնաւ իր կարծիքը։ Հոլանտացիք կ'դնահատէին Լուակաց Ուլիամի թոռին այդ զգուշութիւնն ու լռութիւնն։ Թէև ինք շռայլ էր բնաւորութեամբ, բայց կ'պահանջէր որ տէրութիւնը խնայասէր լինի։ Մեծ եղաւ Հոլանտացւոց ուրախութիւնն երբ թագաւորը հրամայեց որ իր տարեկան թոշակէն, որ էր մէկ միլիոն ֆիորին, մի երրորդ մասը յօգուտ դանձին կտրեն։

Ուիլիամ թագաւորը միշտ չեղոք դիրք բռնած է միջազգային քաղաքականութեան մէջ։ Իբրև Լուքսէնպուրկի մեծ դուք՝ քիչ մնաց սիրոի մոնէր այն վէճին մէջ՝ որ նոյն մեծ-դքսութեան պատճառաւ ծագելու վրայ էր Ֆրանսայի և Գերմանիոյ մէջ 1867ին։ Երբ Լոնտոնի կեսպանաժողովը մեծ-դքսութեան չեղքութիւնը հրատարակեց, Հոլանտայի թագաւորը ամենէ յառաջ ստորագրեց այդ պայմանագիրը։ Նա կ'վախնար, մանաւանդ 1870էն ի վեր, Գերմանիայէն և իրաւունք ունէր, վասն զի ամեն մարդ գիտէր որ Պիսմարգ իշխանն ստէպ ակնարկած էր հրապարակաւ Հոլանտայի «Գերմանական գաւառներու մասին։ Ուլիամ թագաւորին իշխանութեան ժամանակ Հոլանտայի դաղթային գործերը յաջող վիճակի մէջ չէին։ Տասը տարիէ հետէ Աղչինի դէմ սկսուած պատերազմը հարիւրաւոր միլիոններ ծախք պատճառեց, սակայն ցարդ օգտաւէտ արդիւնք մը չարտադրեց։

Ուլիամ թագաւորին ընտանի կենցաղն այնքան գովելի չէր։ Մանկական հասակէն կիները մեծ դեր ունեցած են իր կենաց

թէ լաւ և թէ վատ գործերուն մէջ։ Իր մայրն՝ Աննա թագուհին՝ Ռուսիոյ Պօղ Յարին դուստրը, ազդեցիկ ներգործութիւն ունեցած է իր վրայ։ Թէ ի Բարիզ և թէ Հելվէտիա Ուլիամի վարած կեանքը վիպասանութեան նիւթ կրնայ ընծայել։ Նա երկու անգամ կարգուած է։ Բան երկու ամեայ էր երբ իրեն կին առաւ Վիւրթեմպէրկի Սոֆի իշխանուհին՝ որ իրմէ մի տարու փոքր էր։ Անյարմար էր այս ամուսնութիւնը։ Սոֆի թագուհին չէր գեղանի, բայց հաղուագիւտ իմացականութեամբ օժտուած էր։ Ոչ միայն քաղաքական այլև զրական ու արուեստագիտական խնդիրներու յետին ծայր հետամուտ, կ'փափաքէր Հակ քաղաքն ընել իմացական ազդեցութեան կեդրոն մը։ Տաս տարի վարքով ու ճաշակով ներհակ այս ամուսիներն անմիաբան ու անհաշտ միճակի մէջ ապրեցան։ Թագուհին 1877ին մեռաւ։ Այս ամուսնութենէ Ուլիամ թագաւորն երկու զաւակ ունէր. մին՝ Օրանժի իշխանն՝ հալումաշ կազմուածքով, և միւսն կարկամոտ։

Թագաւորն իր կնոջ մահուանէ ետք կարծես նոր մարդ մը, վեհապետի նոր տիպար մ'եղաւ։ Որոշեց վերստին կարգուիլ՝ իր երկու որդիքն արքայական գահուն իրրև ժառանգորդ անյարմար նկատելով, և ընտրեց 1879ին Վալդէկ Բիրմոնի Էմմա իշխանուհին՝ որ քսան տարեկան էր։ Ամեն կողմէ արգահատութեան ձայներ լսուեցան այս անպատեհ ամուսնութեան վրայ։ Բայց ամենուն ակնկալութեան հակառակ՝ կ'երևի թէ երջանիկ էր Էմմա թագուհին, որ մեծ ազդեցութիւն ունէր իր ամուսնոյն վրայ։ Նէ իրրև ընտանեկան առաքինութեանց տիպար մը կ'նկարագրուի և Հոլանտական թերթեր զինք միշտ կ'ներբողեն։ Այնուհետև մեռան հետզհետէ ի Բարիզ՝ թագաւորին երկու որդիքը գայթակղելի կեանք մը վարելէ ետք։ Իրրև մխիթարութիւն թագաւորն ունեցաւ դուստր մը՝ Ուիլհէլմինա անուն։ Մի քանի տարի առաջ հաստատուած օրէնքի մը համեմատ՝ Էմմա թագուհին այժմ կ'վարէ խնամապետութեան պաշտօնի իսկ փոքրիկ իշխանուհին, զուարթ, կայտառ աղջիկ մը՝ որ սահմանուած է մի օր թագուհի լինիլ, իր ուսմամբ և խաղերով կը պարապի։ Կ'սիրէ ձի հեծնել, պզտիկ կառք վարել և արդէն Հոլանտացւոց աչքին լոյսն է։

ՀԱՆՐԱԳԻՐ ՀԱՅ ԵՐԵՒԵԼԵԱՑ

ԱՌ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆՆ

Երեւելիներ՝ Թոյլ տուէք հրապարակէջին Հայ երեւելեաց ոչոչ առ Վեհ. Սուլթանն մատուցեալ հանրագրոյ մը հեղինակ պատճէնը։

Անձինք ոմանք աստ անդ համարձակած են ձեռնարկել ապօրէն հրատարակութեանց և գործողութեան, Հայ հասարակութեան փրկութեան ու շահուց վնասող նպատակի մը ծառայելով, միանգամայն նպատակ ունենալով խղելու Հայ հպատակաց Օսմանեան կառավարութեան հետ ունեցած դարաւոր հաւատարմութեան կապերը, և այս կերպիւ աշխատելով խարել պարզամիտները։

Այդ անձինք Հայ հասարակութեան ամենափոքր մէկ մասը կազմելով, բնաւ որ և է հանգամանք և արտօնութիւն չունին յանուն Հայ հասարակութեան գործելու։ Այս անձանց մէջ կարեւոր անձնաւորութիւն մը չգտնուիլն ապացոյց է թէ Հայ հաւատարիմ հպատակներն չեն ծառայեր նոցա նպատակին։

Հայ հաւատարիմ հպատակներն 500 տարիէ ի վեր Ձերդ Վեհափառութեան Օգոստափառ Նախնեաց բարձր հովանւոյն ներքև ապրելով, պահպանած են իրենց կրօնը, լեզուն, աղգութիւնն, և երջանիկ ու անդորր կացութեան մ՚արժանացած են։ Հայք առ այս իրենց ամէնէն նուիրական պարտականութիւնը համարած են հաւատարմութիւն առ Օսմ. կառավարութիւնն և ասոր փոխարէն արժանացած են Կայս. կառավարութեան վստահութեանն ու պաշտպանութեան։

Մանաւանդ այս դարուս մէջ, շնորհիւ մեր Օգոստ. Վեհապետին ընդունուած այնչափ օգտաշատ արդիւնքներ՝ Ձերդ Վեհափառութեան բարեբաստիկ գահակալութեան օրէն ցայսօր ծառայած են, առանց բացառութեան, բոլոր կայսերական հպատակաց բարոյական ու նիւթական յառաջադիմութեան։ Տարակոյս չկայ որ Հայ հաւատարիմ հպատակք այսուհետև ևս պիտի արժանանան կայսերական շնորհաց։

Հայ հաւատարիմ հպատակաց ամենամեծ փափաքն է ամենայն ապահովութեամբ ու անդորրութեամբ ապրիլ շնորհիւ Կայս. կառավարութեան դթութեանն ու արդարութեան։

Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ ծառայք։

(Սրբազրութիւն)

(Փոլսէր) Ելմտական նախարար Յակոբ, Ծերակուտի անդամ Աբրահամ, արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Տատեան Յարութիւն։ — (Պեսէր և Էֆէնտիէր) Դատական նախարարութեան խորհրդական Վահան, Ծերակուտի անդամ Սէրվիչէն, Պետական խորհրդոյ անդամ Ապրօ, առաջին ճարտարապետ Սարգիս Պալեան, Պետական խորհրդոյ անդամ Նուրեան, Բէժիի քոմիսէրներէն Սարգիս Համամճեան, Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Գաբրիել Նորատունկեան, Մաքսուտ Սիմոն, Արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի օգնական Իլիաս Զայեան, Արտաքին գործոց նախարարութեան հաշուակալ Գրիգոր Խլտրբեան, Հպատակութեանց Դիւանին անօրէն Օհան Պաղասաղեան, Վճռաբեկ ատենի անդամ Կարապետ Խումարեան, կայս. պալատան խորհրդական բժիշկ Տիգրան Փեշտիմալճեան, կայս. շէնքերու ճարտարապետներէն Յովհաննէս Աղնաւորեան, վառօդապետ Պօղոս պէյի որդի Առաքել, Աբիկ Ուենճեան, Ապահովութեան Ընտուկի արկղակալ Յովհաննէս Փափազեան, Սպարապետի Դրան թարգմանութեանց սենեկին անօրէն Միքայէլ Մամիկոնեան, Մաքսուտ Սեպուհ, առևտրական երկրորդ դատարանին նախագահ Թովմաս Խորասանճեան, Կիւլպէնկեան Սարգիս, վերաքննիչ ատենի անդամ Գաբրիել Գաբրիելեան, առևտրական առաջին դատարանին անդամ Տիգրան Եուսուֆեան, Յովհաննէս Էսաեան, Մատթէոս Ուենճեան, Անտոն Հաճեան, Տիգրան Կիւմիւշկերտան, Առևտրական սենեկի անդամ Մանուկ Ասլանեան, փաստաբան Աղէքսանդր Մերիէմդուլի, փաստաբան Սուետիս Գոլոլեան, Հարենց Նշան, Միքայէլ Մոմճեան, և Բարսեղ Հալաճեան։

* * *

Այս հանրագրոյն ի պատասխան կայս. պալատան առաջին քարտուղարը հետևեալ գիրն ուղղած է հանրագիրն ստորագրող Վսեմ. Յակոբ, Աբրահամ ու Յարութիւն փաշաներու, Վսեմ. Վահան էֆէնտիի, Վսեմ. Սարգիս պէյ Պալեանի, Վսեմ. Ապրօ էֆէնտիի, Վսեմ. Սարգիս էֆէնտի Համամճեանի, Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյի և այլոց.

«Ձեր կողմէ միահաղոյն պատրաստուելով Վ.Եհ. Սուլթանին մատուցեալ հանրագիրը ցաւ կը յայտնէր թէ մէկ քանի անձինք ձեռնարկած են պարզ միտներ խաբել, Հայ հաւատարիմ հասարակութեան փրկութեան ու շահուց վնասող նպատակի մը ծառայելով և կայս. կառավարութեան հետ վաղեմի հաւատարմութեան կապը խզելու նպատակաւ։ Միանգամայն յարած էիք թէ այդ կարգի անձինք Հայոց ամենափոքր մէկ մասը կազմելով, բնաւ արտօնութիւն չունին յանուն հասարակութեան գործելու և թէ Հայ հպատակք այդ տեսակ անձանց վնասակար նպատակին բնաւ մասնակցած չեն։ Այս հանրագիր ներկայացուած է Վ.Եհ. Սուլթանին, որ հրամայած է հաղորդել Ձեզ հետևեալներն.

Ն. Վեհափառութիւն բոլորովին վստահ է թէ Հայ կայս. հպատակաց դարաւոր սէրն ու հաւատարմութիւնն առ Օսմանեան գահն բնաւ նուազած չէ։ Այս օրերս մէկ քանի անձանց կողմէ ձեռնարկուած թշնամական ու խռովայոյզ հրատարակութիւնք ու գործողութիւնք՝ փոքրաթիւ կարմամիտներէ զատ և ոչ մէկ Հայու հաւատարմական զգացմանց կրնան խափան լինիլ։ Վեհ. Սուլթանն այս մասին բնաւ չտարակուսիր և Հայ հպատակաց նկատմամբ իւր կայս. համարումը կատարեալ է։ Միանգամայն նոյն հասարակութեան երևելեաց կողմէ այս կերպիւ հաւատարմական զգացմանց արտայայտութիւնը կայս. բարձր գոհունակութեան արժանացած է։ Ն. Վեհափառութիւն յոյս յայտնած է թէ՝ ազգու խրատներ պիտի տրուին անոնց որք հաւատարմութեան նշանաբանին բնաւ չհամապատասխանող ցը նորական ինչ ինչ գաղափարներու ծառայել կ'ուզեն, և թէ՝ ջանքեր պիտի լինին այդ տեսակ անհատներն օրինաւորութեան և ողջմտութեան շաւղին մէջ մտցնելու համար վերստին։

17 Էպիլլխբը 308 ԾԱՂԻԿ
18 Նոյեմբեր 306

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈԴԻ

Բ.

Մարդկութիւնը կ'վերածնի անընդհատ Ստեղծագործութիւնն երկրագնտիս ամեն շնչաւոր արարածներու մէջ բնական օրէնք մ'է որով նոր սերունդներ կ'յաջորդեն անդադար հիներուն, և կ'բազմանան, կենաց այս պայքարին մէջ տկարները տեղի տալով զօրաւորներուն։ Այր ու կնոջ միաւորութիւնն իբրև անհրաժեշտ տիտոյք ընկերական տարբեր պայմաններու մէջ տարբեր ձև և ուղղութիւն ունեցած է տարբեր բարուց և օրինաց համեմատ, սակայն՝ ըստ բացատրութեան Ցիւմայի՝ թէ պահէ, թէ հայրենի պան թէ ֆոլչի կնկան հետ լինի այդ միութիւնն, անունն ու պատճառը նոյն է, միաւորութիւն է, որ միայն ժամանակի, արարողութեանց և տեղական օրէնսդրութեան բերմամբ կ'փոխէ նպատակ և արդիւնք։

Արդի մարդկային քաղաքակիրթ ընկերութիւնը կ'նշանակէ իբրև հարճութիւն ու պոռնկութիւն այն ամէն պատահական ու անկապ միութիւններն՝ որոց տարբեր անուամբ դառնալու կ'քարոզեն մարդկան մի քանի իմաստասէրներ՝ յանուն ազատութեան, և իբրև օրինաւոր կ'հռչակէ միայն այն միութիւններն որ ամուսնութիւն կը կոչուին, ծնունդ և ապրիւր ընտանեկան կազմակերպութեան։ Իսկ միւս կողմէ դաս մ'ուրիշ բարոյագէտներ՝ դլուխ ունենալով Դոլստոյ կոմսն, անբնական և հակակառակ Աւետարանի և բանականութեան կ'հռչակեն մինչեւ անգամ ամուսնութիւնը։ Այս վարդապետութեան քարոզներն ունին սակայն շատ զաւակներ, և ինչ որ խօսքով կ'հաստատելու կ'ջանան գործով կ'ժխտեն և այն անհեթեթ երազատեսներու կարգը կ'անցնին որ՝ Շոբէնհաւրի պէս՝ յուսահատութեան իմաստասիրութեան և մարդկային սեռի անէութեան դաւանութեան մէջ կենաց դառնութեանց դարմանն ու վախճանը կ'փնտռեն։ Բայց մարդկութիւնն՝ հին ու նոր անրջական տեսութեանց հակառակ, կ'աճի, կ'տևէ ու պիտի յարատևէ, և ժողովուրդները պիտի մաքառին անդուլ որ ոչ միայն բազմանան այլև կենաց լաւագոյն պայմաններու տիրանան։

Սակայն եթէ մարդկութիւնը սահմանեալ ճակատագրին կ'դիմէ անվրդով, ինչ է պատճառն որ ժողովուրդները մի և նոյն համեմատութեամբ չեն բազմանար ու զարգանար։ Ինչ է պատճառն որ ոմանք իբր ախտաժէտ կ'հիւծին ու կ'մաշին և այլք կենսական տարրներով գօտեպինդ ընդ յառաջ կ'ընթանան։ Այս հարցմանց ի պատասխան բազմաթիւ խնդիրներ կ'ներկային մեր առջև որ ժողովրդեան մը կրօնական, ընկերական ու քաղաքային դրութեան կ'վերաբերին, բայց ամենէ հիմնական ու կարևորն է մարդկան աճման բնապատճառ, այր ու կնոջ կենակցութիւնն, կենակցութիւն որ, արդի քաղաքակրթութեան տեսակէտով՝ երբ որոշեալ պայմաններու համեմատ կատարուի, ընտանեկան մարմինը կազմելու պաշտօնն ունի։

Գ.

Աբդ՝ այս մարմինն՝ որ ընկերային շղթային առաջին օղակն է, որքան հաստատ ու բարեկարգ լինի, նոյնքան ժողովրդեան մէջ բարոյական ու մտային ոյժերը կ'աւելնան, կենսական աճման և նիւթական բարօրութեան տարրներն ևս աւելնալով։ Ընտանեկան հաստատութեան ու բարեկարգութեան հիմն պէտք է փնտռել ընտանեկան ոգւոյն մէջ՝ որ կ'ենթադրէ ամուսնական յարմարութիւն ու հաւասարմութիւն, միութիւն և հաւասարութիւն, սէր ու պատիւ, ինչպէս նաև այն բարոյական հանգամանքն որ կ'բխին պարտաճանաչութենէ։ Ընտանեկան ոգին է որ կ'ներշնչէ մարդուն ազնուութեան, բարոյական արիութեան, վեհանձնութեան և անձնուիրութեան զգացումներ, ընտանեկան ոգին է ընտիր բարուց և ազգաշէն գործերու շարժառիթը։ Ընտանեկան լաւ կազմաւորութեան մէջ կ'կազմուին ու կ'մշակուին նաև այն առնական առաքինութիւններն որով ազգերն գիտական, ճարտարական և ռազմական ասպարէզներու մէջ անուանի կ'հանդիսանան։ Աւելի տունն է, ամրակազմ, սիրայօդ, բարոյարար տունը քան դպրատունն է որ կ'շինէ ազգերն և մարդկային սքանչացման մերթ ընդ մերթ կը ներկայէ հանճարեղ, բարեշրջող անձնաւորութեանց տեսարանը։ Ընտանեկան ոգւոյն ծնունդն էին այն լուսատու հերոսներն որով կ'պարծի ցարդ Հայ ազգը։ Ոչ միայն հիմնական կրթութեան, այլ գլխաւորապէս ընտանեկան ոգւոյն արդասիքն են անգլիական ու գերմանական ազգերու որդիք որ աննկուն բնաւորութեան, կորովամտութեան ու գործունէութեան տիպարներ են։

Եւ միթէ ոտէպ չէ հրատարակուած, իբրև անուրանալի ճշմարտութիւն, որ Հայ ազգը մեծ մասամբ պարտաւոր է իր ներկայ գոյութիւնն այն ընտանեկան ոգւոյն, որով իր զաւակները կ'տոկային կրօնային և այլ հալածանաց, կ'արհամարհէին օտարութեան լեղի հացն և իրենց ընտանեկան շրջանին մէջ կ'վինտռէին այն հոգեկան

սիսվանքն ու անդորրութիւնը զոր չէին գտներ աշխարհի արկածալի կենաց մէջ։

Ո՞ւր են հիմակ հայ տանտիկիններն, ո՞ւր, հայ մայրերն, աղգութեան և եկեղեցւոյ պահապան հրեշտակներն։ Ի՞նչ վիճակի մէջ է ընդհանրապէս մեր ընտանեկան դրութիւնը։ Մի թէ ամէն ուրեք կ'պահէ հայ ընտանիքն իր աւանդական համեստութեան, պարզասիրութեան և սիրոյ սրբավայրն անվթար։ Անտարակոյս այդ սրբավայրը շատ տեղ ունի գոյութիւն, անտարակոյս աղգին զանազան դասակարգերու մէջ ընտանեկան ոգին դեռ վառ կ'մնայ. թերևս այդ է պատճառն որ հայութիւնը կ'յարատևէ, և կ'հաստատուի Պ. Ռընանի այն նշանաւոր խօսքը թէ՝ աշխարհս այդ դոյզն ինչ առաքինութեամբ կանգուն կեցած է. տասն արդարներ ստէպ կ'ստանան մեղապարտ ժողովրդեան մը ներումն։ Եւ իրաւի՝ Հայոց Աղգը վաղուց ընկած էր կորստեան անդունդն եթէ ընտանեկան առաքինութեանց դէթ մի մասն իր թոռներուն չաւանդէր իրրև անգին ժառանգութիւն։ Բայց միթէ այդ մասը պիտի բաւէ՞ միշտ—տարակուսելի կ'թուի մեզ այս նորելուկ դաղափարներու և մոլեկան հակումներու հոսանքին առջև որ ուժգին կ'զարնեն մեր դռներն . . . ։ Ուստի պարտ է խոստովանիլ որ հայոց վտարանդի կացութիւնն ի նկատի առնլով, օտարոտի աղդեցութիւններ մուտ պիտի դանէին անշուշտ ոչ միայն իր ազգային այլ և ընտանեկան կենցաղավարութեան մէջ։ Այդ աղդեցութիւններն ղգալի են մանաւանդ բնիկ երկրին հեռի դաղթած հայոց մէջ։ Շատ մը լաւ բաներու հետ եւրոպական քաղաքակրթութիւնը բերաւ մեզ և իր մոլորութիւններն, որոց սովոր է յարիլ կոյրդկուրայն տգէտ, անմիտ և օտարասէր ժողովուրդ մը։ Հայութեան երկու տոկուն սիւներն, եկեղեցին ու ընտանիքն, վտանդի մէջ են։ Մին արդէն կ'հեծեծէ, ի շնորհս մեր անտարբեր սուրբ վարդապետներու, հիւսիսային պետութեան մը ճիրանին ներքև, միւսն գրեթէ անկերպարան ուղղութեան մէջ կ'տարուբերի՝ ի շնորհս հին և նոր ընկերային սովորու-

թեանց և կրօնական, տնտեսական և օրէնսդրական դրութեանց, որոց ենթակայ են հայք։

Այս անկերպարան վիճակը անշուշտ մի և նոյնը չէ ամեն հայաբնակ երկիր, անշուշտ ընտանեկան կազմաւորութեան և ոգւոյն սպառնացող վտանգներն համանման պատճառ և ընութիւն չունին, թէև կրօնական օրէնքն, արարողութիւնն ու պսակը գրեթէ նոյնն են ամեն ուրեք։ Հետևապէս անհիմն եզրակացութեան կ'հասնինք եթէ մեր ընտանեկան արդի դրութիւնը մի և նոյն տեսակէտով դատաքննենք։ Ակներև են այս մասին տարբերութիւնները մեր գաւառային և գաղթային կենաց մէջ, ինչպէս որ կան նաև զգալի զանազանութիւններ այս վերջնոյն մէջ։

Գաւառացի հայն ընդհանրապէս պահած է ընտանեկան մի շատ ընտիր բարեմասնութեանց հետ՝ հին և անշահ կանոններ ու ձևեր որ կնոջ ստրկութիւնը կ'հաստատեն և արդի լուսաւորութեան մէջ տրտուղութիւն կը համարուին, մինչդեռ գաղթային կամ եւրոպականացեալ հայն ընտանենական աւելի խառն դրութեան մը հետևելու կ'հակի և ազատականութեան պատրուակաւ իր ընտանեկան յարկն ամեն նորութեանց առջև բաց կը թողու։ Սակայն այս երկու ուղղութիւններն ևս ծայրայեղ են։ Մէկ կողմէ կ'տեսնենք անշահ նախապաշարմանց, տգիտութեան և պանդխտութեան յառաջ բերած վնասներն, միւս կողմէ ինքնասիրութեան, շահամոլութեան և հեշտամոլութեան գործած աւերումներն ընտանեկան շրջանին մէջ։ Այս ՁՆասներն ու աւերումներն ուրիշ բան չեն, բայց եթէ ընտանեկան կռիւ, խռովութիւն, անհաւատարմութիւն, չնութիւն և բաժանումն, ուստի և ազգային մարմնոյն վատթարացումն ու քայքայումն։

Գաւառային կենաց ամենէ ծանր ու ազէտալի վերքը պանդխտութիւնն է։ Հայ կինը կ'տանի անմռունչ ամեն ամուսնական խստութեանց՝ ի սէր ընտանեկան պատուոյն և զաւակաց, վասն զի կ'յուսայ և թէ ևս զիտէ որ տեղա-

կան պայմաններու փոփոխութիւնն, ազգային լաւ դաստիարակութիւն մը քիչ քիչ պիտի տան իրեն այն ընկերային ազդեցութիւնն և ազատութեան շունչն որմէ այժմ զուրկ կ'գտնուի, սակայն չէ կարող դիմանալ բաժանման, պանդխտութեան և ասոնց յարակից տառապանաց։

Եւ, իրօք, ինչպէս կ'կատարուին սովորաբար ամուսնութիւնները գաւառներու մէջ։ Համառօտ պատկեր մը դնենք։ Սէրը դուն ուրեք չարժառիթն է այս միութեանց։ Ա. հասարակ ծնողք կ'ընտրեն հարսնցուն, միշտ պարկեշտ, բարեսիրտ և հլու օրիորդ մ'որ պատրաստ է խօսնայրը սիրել՝ ամեն արտաքին փորձութենէ հեռի, զոհուիլ իր վրայ իշխող կամաց ու նախապաշարմանց, և որու անգնահատելի օժիտն է ոչ այնքան իր գեղն ու շնորհն, որքան հաւատարմութեան և հնազանդութեան զգացումն՝ որոց ի ծնէ հակամէտ է։ Այդ զգացմամբ կը համակերպի ամեն ընտանեկան պարտաւորութեանց։ Ինք ոչ միայն իր տան աղախինն է, այլ և սաեպ ամուսնոյն աշխատակիցը, նեցուկն ու բեռնակիրն։ Մի քանի տարի կ'անցնին և ահա տնտեսական դժուարութիւններ կ'ծագին։ Հունձքն անյաջող, տուարը ցիր ու ցան, վաշխառուն դուռը կ'զարնէ, կ'գրաւէ ագարակին կամ արտին մի մասը. տնակին սովորական պաշարը կ'հատնի. օրողջէքն աննշան է. անօթութիւնը կ'սպառնայ . . . ։ Ի՞նչ ճար կայ։ Ահա այրն նուաղ սրտոտ քան իր կենակիցն և յուսահատ՝ փոխանակ արիաբար մաքառելու վերահաս ձախորդութեան դէմ որ չկրնար յարատև լինիլ, փոխանակ կրկնապատկելու իր ճգունքը թշուառութեան առաջն առնելու համար, անմեղ զաւակներուն ու կնոջը աղաչանաց հակառակ, կ'թողու կին, զաւակ, արօր, և եթէ բանուոր է, ամեն գործիք և օտար երկիր բաղդ փնտռելու կ'ելնէ իր բեռը թեթևցնելու յուսով։ Եւ ինչ կ'գտնէ շատ անգամ. անբաղդութիւն, հիւանդութիւն, մոլութիւն, որոց մէջ կ'մոռնայ ամեն բան, բաղմամեայ օտարութեան լեղի բաժակը մինչև մրուրը կ'քամէ և ի վերջէ

անհետ կ'կորսուի։ Իսկ իր բարի ընկերիկ ամուսինն՝ որ ընտանեկան հաստատութեան, բարոյութեան ու սիրոյ կեդրոնը լինելու սահմանուած էր, կ'մնայ անտերունչ, թշուառ և երբեմն չքաւորութենէ ստիպեալ խառնակեցիկ արարած մը։ Ո՞վ է այս ընտանեկան անկման գլխաւոր հեղինակն, եթէ ոչ այն ամուսինն՝ որ թոյլ սիրոյ, պատուոյ, հայրական պարտաւորութեանց զգացումէ զուրկ՝ կամովին կ'տարադրի։ Լա՜ւ, հաղարապատիկ մեծ, բարոյական, առնական գործ մ'ըրած պիտի լինէր եթէ իր ընտանեաց ծոցն՝ ամեն ճգանց հակառակ չյաջողելէն ետև, մեռնէր այդ եղկելին քան թէ աղտեղութեանց գուրն գլորէր և իր որդիքն ողջ ողջ թաղէր՝ մատնելով զանոնք այն սպառնալի թշուառութեանց որոցմէ վատօրէն խոյս տուած է։

Մեր պուէտներն իրենց քնարին մի քանի թելերն պանդխտին հէք կենաց նուիրած են. անդադար կ'երգեն ոգբագին անոր սև բաղդը, կսկիծները, լացն ու կոծը, և քաղաքագիտական պատճառներու կ'վերագրեն անոր այս անբաղդութիւնը, սակայն եթէ մոտէն քննենք պիտի տեսնենք որ պանդխտութեան այդ մենամոլութիւնն ուրիշ շարժառիթ ունի։ Պարտուց բեռ, վաշխառուի ճնշում, տրոց ծանրութիւն, օրողչէքի նուաղում, ի մի բան՝ չքաւորութիւն շատ անգամ պատրուակներ են պանդխտութեան։ Կեանքն ուժան է արևելեան երկիրները, և անձանձիր աշխատութեամբ յետին աղքատն օրապահիկը ճարելու միջոցը կարող է գտնել։ Ընտանեաց գոյութեան և պատուոյ պահպանութեան խնդիրներն քան ամեն պատճառ գեր ի վեր են, քան ամեն աղէտ աւելի ծանր կ'կշռեն, նա մանաւանդ յաջողութեան հեռաւոր յոյս մը չկրնար ապահով դարման մը համարուիլ մոտալուտ կարծուած նիւթական թշուառութեանց, որոց անմիջական թեթևումը կրնայ բերել միայն աշխատանքն, քրտնաջան աշխատանքն, որ անտարակոյս կ'արդիւնաւորի ընտանեկան սահմանին մէջ՝ ուր զաւակաց սէրն, անոնց հացակարօտ վիճակը նոր ոյժ և կորով կ'աղդեն հօր

ջլապինդ բաղուիներուն։ Պանտխտութեան բաղմադիմի աղէտից պատմութիւնը կարելի է ամեն օր կարդալ դաւառային շատ ընտանեաց կործանման, հայրենեաց ամայութեան, զանազան մոլութեանց և ժողովրդեան նուազման մէջ։

Ուստի, ըստ մեզ, պանդխտութեան էական պատճառներն են ծուլութիւն, ինքնամոլութիւն, միօրինակ կենաց տաղտուկը, յանկարծ հարստանալու և նոր նոր աշխարհներ տեսնելու տենչն, որու կ'միանայ նաև, իբրև պատրուակ, ընտանեաց օրապահիկն ի հեռուստ հայթայթելու խոստումն, խոստում՝ որ երբեմն ձախող պարագաներն և ստէպ պարտաղանցութիւնն ու մոլութիւնը ի դերև կ'հանեն և շատ ընտանիքներ ի կորուստ կը մատնեն։ Ահա այս յոռի հանգամանաց համար միշտ դատապարտելի է պանդուխտ դաւառացին, և զոհեր պիտի չատցնէ ցորչափ իր ընտանեկան պատասխանատուութեան անզգայ մնայ։

Եթէ ամեն դաւառի մէջ կրօնական իշխանութիւնն իր պաշտօնին կոչում ունենար, եթէ ընտանեկան ոգւոյն հետ աշխատասիրութեան ոգին կենդանի լինէր, եթէ կանխահաս և ստէպ բռնի կամ խորհրդաւոր ամուսնութիւններով ապրուստի և ընտանեկան միութեան պայմանները չդժուարանային թերևս այնքան չէր ծանրանար պանդխտութեան ախան և այնքան զոհեր չէր ըներ, ինչպէս կ'զգուշանան ընելէ այն դաւառացիներն որ իրենց բնիկ երկրին մէջ և ընտանեաց ծոցն գիտեն դըտնել ընտանեկան բարեկեցութեան և անդորրութեան միջոցները։ Եւ ասոնք ոչ միայն քաջ բանուորներ այլ և առաքինի հայրեր են։

(Շարունակելի)

ԱՍՏՂ ԲԵԹԼԵՀԷՄԻ*

Բ.

Հեղինակն իր գործն 56 գլխի բաժնած է. մէն մի գլխի մէջ կ'ճառէ նա շատ ծանրակշիռ խնդիրներու վրայ, թէև ստէպ իրարու անկապ, և զոր կարելի է ամփոփել այսպէս, Տիեզերք, մարդ, Աստուած, այսինքն հին և նոր իմաստասիրութեան այն նիւթերն որոց վրայ թեր ու դէմ բիւրաւոր գրեանք կան և որ բիւրաւոր դրութեամբ և մեկնութեամբ բացատրուած են, առանց հիմնական լուծում ու համոզում բերելու։ Զի մարդը տիեզերքէն և տիեզերքն Աստուծմէ զատ ըմբռնելու կարողութիւնը չէ տրուած մարդկային իմացականութեան։ Ապա Բեթլեհեմի հեղինակին դրութիւնն ու բացատրութիւնը նախորդներէն այս տարբերութիւնն ունի միայն որ քրիստոնէական աստուածաբանութեան լոյսն յատկապէս օգնութեան կ'կոչէ ուրապատոյտ բաղի մ'ելքը գտնելու համար։ Ներկայ գարուս մէջ մանաւանդ նշանաւոր եկեղեցականներ գիտութեան ջահով ալ մտան այդ բաղին մէջ և գերբնային երևոյթներ կամ էսկուութիւններ լուսաբանելու համար փորձեր ըրին և դեռ կ'ընեն, սակայն կէս ճամբան մնացած կ'երևին, վասն զի՝ իրրև վերջին և միակ ապաւէն՝ կոչում կ'ընեն հաւատքէ անմեկնելի իրերու համար։ Նոյն ինք հեղինակն նախասահմանութեան, պատճառի և արդիւնքի, ճշմարտութեան և մինչև անգամ գիտութեան մասին տեսութիւնները մեկնելու համար հաւատքի մէջ խարիսխ կը նետէ։ Մէջ կ'բերեմ հաւատքի տուած սահմանն՝ միանգամայն ընթերցողին գաղափար մը տալու համար գրքին ոճին վրայ։

« — Հաւատքը, կ'ըսէ, ըստ ինքեան հաղորդութիւն[1] մը չէ, այլ զոյն նուիրագործող զօրութիւն։ Հաղորդութիւնը տեղի կ'ունենայ կամ գիտու-

[1] Հարկ է գիտնալ որ հաղորդութիւն բառը սովորականէն տարբեր իմաստ մը կ'առնու այս դատին մէջ և կ'սահմանուի այսպէս— Հաղորդութիւն գլխին մէջ. — « Հաղորդութիւնն կենաց երեք դէմքով կ'կոչուի յարակցութիւն կամ ձգողութիւն, տպաւորութիւն կամ զգայութիւն, իմացողութիւն կամ հաւատք։ »

* Տե՛ս Հոկտեմբեր ամսագիր, երես 494։

թեամբ և կամ վկայութեամբ և կեանքը հաւատով միայն կ'հաղորդուի նոցա։ Գիտութիւն և վկայութիւն ըստ ինքեան ստուեր մը, խորհուրդ մը կամ ծրագիր մ'են, և հաւատքն է որ զնոսա կ'մարմնացնէ։ Գիտական վըկայութիւնն շաւիղ մ'է, հաւատքը ուղևոր մը, նա է բանն, սա է ունկն, նա է ճշմարտութիւնն, սա է հաղորդութիւնն։ Հաւատքն է որ մարդս դրապէս հաղորդակից կ'ընէ այն տիեզերքին զոր տրամաբանութիւնը կը յայտնէ։ Առանց հաւատոյ որ և է ճշմարտութիւն ըստ ինքեան ամուլ է և հաւատքն է որ զնոսա կենաց ի մատակարարութիւն կը հաղորդէ. . . ։ Հաւատքը յետ բաղում դարուց կը զբրէ զմարդ դրապէս հաղորդակից առնել հաւատոյ դերագոյն Վարդապետին և կենաց անտեսութեան բացարձակ Ուսուցչին հետ . . . ։ «Դարձեալ, — Հաւատքը միայն է, որ արարածային լրիւ անեղութիւնք ծիր հաղորդութեան առնելով, ի մէջ աբարչին և արարածոց, ի մէջ բացարձակին և վերաբերականաց պատգամաբեր հրեշտակ կը հանդիսանայ։»

Ապա հեղինակն հաւատքի տեսակներ կ'որոշէ, ինչպէս՝ տընտեսութեան տեսակէտով՝ ուղղափառ և մոլար հաւատք, վկայութեան տեսակէտով՝ դրական և ենթական հաւատք . . . և կ'շարունակէ։

— «Հաւատքը յանձին մանկութեան քաջ կ'վկայուի։ Մանկութիւնը դրախտի կենաց (և՝ ըստ հեղինակի՝ այն է դրախտի կեանքն որ իր անտեսութիւնն Արարչին բանաւոր հոգւոցն վարելու կ'պատրաստուի) մի անաւաղ հատուածն է, զոր Արարիչը Սերովբէից սրոցն պահպանած է ի մարդ։ Մանկութիւնը չներկայեր այլ ինչ բայց եթէ իր լրութեամբը հաւատոյ զանգուած մը։ Մարդկային հասակի այս նախասահմանական հատուածը խափանելն չարէն ի դէպ եկած խժդժութիւն մ'է, զի նախասահմանութեան հասակը, մանկութիւնն, եթէ նախահօր դժբաղդութեամբն, իւր դրախտէն չէդուի, մարդկային հոգին հաւատոյ դերագոյն հաղորդութեամբ այնպիսի մարդ մը ի զորթ և ի զորդ կ'բերէ ի նա, որ ճշտիւ դրախտի զԱդամը ներկայէ, և զոր Աստուածորդին աշխարհի կենաց տիպար, իւրով մարդեղութեամբ ի հանդէս ածեց . . . ։»

Եւ հեղինակն այս խրթնաբան եզանակաւ անխոտոր կ'ընթանայ իր կենդանի տեսութեանց մէջ։ Թերևս այս խրթնութեան մէջ է գործին վսեմութիւնը։ Բայց ի հարկէ չունիմ յաւակնութիւն վեր հանելու իր սահմանած հաւատքին և այլ բաներու վրայ դրած նրբութիւններն, որոց իմ տկար խելքս չըհասանիր։ Բայց ընթերցողին ուշն ամենէ աւելի գրաւող բանն պիտի լինի ճշմարտութիւնն, որու անշուշտ ծարաւի է և Աստղ Բեթլեհէմի գործին հիմնական նպատակն է զայն ի լոյս ածել։ Արդ՝ հեղինակն կ'ընդունի զանազան ճշմարտութիւններ, ըստ տարբեր տեսակէտի, ինչպէս՝ ուղղափառ, մոլար և պարզ. բաժանում մ'որ

չատ կենցաղագէտ արանց և կանանց ճաշակին պիտի ախորժելի թուի անշուշտ։ Սակայն առաջին անգամ կ'լսեմ պարզ և մաքուր ֆիզիքոլոգիան, որ պարզ լեզուով սխալմունք, նախապաշարմունք կ'անուանուի։ Բայց հեղինակն իրաւունք ունի երբ կ'ըսէ թէ՝ դրական, զգայական և իմացական ճշմարտութիւններ կան, այս տարբերութեամբ որ միայն իմացականին կարևորութիւն կ'ընծայէ, մինչդեռ առանց զգայականի կարելի չէ վերացականին հասնիլ։ Իսկ Գիզոլոգիան գլխուն տակ, հեղինակը լրջօրէն կը բացատրէ անոր գերազրական կշիռն, միշտ իր սիրական բնաբանին վերածելով զայն, այս է դրական, զգայական և իմացական գիզոլոգիան, զոր չէ կարելի, իր հանրային իմաստով, իրարմէ զատ ըմբռնել, քանի որ ոչ էապէս զգայական գիտութիւն կայ և ոչ իմացական, այլ լաւ ևս է ըսել որ զգայարանքը, միտքն ու գիտութիւնն միջոցներ են մարդս առաջնորդելու, բնականութեան շնորհիւ, բնութեան օրինաց ճանաչման և այլազան իրաց գիտական դասակարգութեանց՝ որոց ամբողջութիւնը կը կազմէ ընդհանուր գիտութիւնը։ Ապա հեղինակը կ'փնտռէ բնապէս գիտութեան ճանապարհը կամ մեթոդը և առանց մեզ քայլ առ քայլ և ապացոյցներով տանելու ճշմարտութեան, յարաջգոնէ կ'որոշէ, որ ամենագիտութիւնը դերազոյն Էին բաժինն է միայն, և այսպէս իսպառ կ'գոցէ ճշմարտութեան ոչ միայն ճանապարհը այլ դուռն մարդուս առջև, ապաստան տալով անոր յայտնութեան պատգամները։ Ապա կ'յարէ. — «Գիտութիւնն իր էական տեսակէտովն համասփիւռ ճառագայթից ցանց մ'է, կամ յանձին Արարչին իրողութեանց ենթակային ծիրերու անհուն ծածանում մը, որ մէջ ողջոյն տիեզերք ի տես գայ։» Աքանչելի է այս բացատրութիւնն՝ իբրև սահման գիտութեան, այլ ոչ մեթոդի, և հեղինակն նոյն թելը կ'զարնէ երբ Դրական Բեթոդ, Յոգնոլոգիան գլխաներուն կ'անցնի և կատարեալ գիտութեան տիրանալու համար կ'պահանջէ որ մարդ չէ լմէ զգայարանաց, այլ գլխաւորապէս բանավարութեան և հոգւոյ ներգործութեամբ հաղորդ լինի ճշմարտութեանց որոց շառաւիղն իր անձին մէջ ունի, շառաւիղ՝ որ անշուշտ արև կը-նայ դառնալ միայն եթէ մարդկային հոգեհոգին ֆոսֆանֆաֆ գիզոլոգով ընթանայ, և արդէն ամեն մարդ փորձով գիտէ թէ Աղամ ինչ մեթոդով դրաւեց Եւան . . . :

Ըստ իս՝ հեղինակն լաւագոյն մեթոդ մ'ընտրած կ'լինէր իր գրքին եթէ որոշակի և ուրոյն ցոյց տար ու սահմանէր արդի

իմաստասիրութիւնն բաժնող երեք գլխաւոր ճիւղերն, այս է՝ «բնական, դրական և նի-Պապաշրական, և ապա ասոնց յարաբերութիւններն, եթէ ունին, ճշտէր, ինչպէս կ'ջանայ ճշտել, բայց-յական մարդուն գերազանցութիւնն իմացականին վրայ, ջանդրութիւն՝ որ իր գործին ամենէ փայլուն և գովելի դրոշմ է, և ի վերջէ՝ զատ գլուխ մը բանար, ինչպէս որ արժան էր, քրիստոնէական և աստուածաբանական ճշմարտութեաց համար։

Այս ամեն զանցառութիւններն ի նկատի ունենալով հանդերձ, աւելի հեռուն գնալու անտեղի համարելով, պարտիմ խոստովանիլ, որ Ա«ՈՂ ԲԵՆԼԵՀԵՄ նորանչան, եզական գործ մ'է թէ արդի գրական ոճէն տարբերութեամբն և թէ իմաստից արտայայտութեամբը։ Թերևս կ'պարունակէ այն այնպիսի թագուն գանձեր որ ապագային վերապահուած լինի լաւ ևս գնահատելու՝ իմինիս պէս տկար իմացականութեանց անհպելի լինելով։ Այսպիսի գործեր ոչ միայն ուշադրութեան արժանի են այլ և պիտոյք մը այժմեան գրական միօրինակութեան ու անհամութեան և մտային յուլութեան մէջ՝ իրրև դեղ ձկտական և ցնցական։

ԱՊՐՍԱՄ

ՄՏԱԾԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՆՈՒՆԱ

Բաղդին չփացած զաւակն է Նունա։ Ունի գեղ ու հրապոյր։ ունի և ադամանդ ու ոսկի։ Միշտ կ'ժպտի արևն իր երևակայութեան, ինչպէս ոսկիները կ'ժպտին իր աչքին։ Արդ՝ բաղդին թևերով կ'յուսայ Նունա հասնիլ անարգել վսեմ ճակատագրի։ Ինք կենդանի ծիծաղ մ'է, կ'ծիծաղի ամենուն և ամեն բանի վրայ և իր ծոցն ունի սիրտ մ'այնքան լայն ու հովալիր որ փամփչտի նման կ'ուռի ու կ'ուռի, երբ կ'տեղան գլխուն վրայ գովեստներ, և ինքնագով, ինքնահար թմբուկ մը կ'դառնայ։ Ո՞վ կարող է խօսիլ իր առջև բաղդի յարաշարժ անիւներուն վրայ։ Նոյն ինքն է բաղդի տիպարն՝ միշտ ուրախ զուարթ՝ ինչ-

պէս մանկիկ մը գոյնզգոյն խաղալիկներու առջև։ Մեծ մեծ կը ջարդէ Նունա և կենաց միայն շողուն կողմը կ'գրկէ, գրկելով անոր մէջ իր նկարն ու գոհարը։ Ինչ են ուսում, միտք ու տաղանդ, եթէ ոչ հատիներ որ իր գեղոյն առջև կ'նսեմին և աչացը կայծերէն կ'այրին ու կ'տոչորին։ Նունա տղէտ է, ինչ փոյթ, քանի որ նէ կ'կարծէ թէ իր ակնարկները մերթ ուղղակի, մերթ շեղակի և մերթ շեշտակի արձակելով ամեն գլուխ՝ որքան մեծ ու լեցուն լինի, վեր ի վայր, ամեն սիրտ՝ որքան անզգայ ու անվիրաւորելի լինի, կարող է գլորել ու ծակել։ Միթէ բաւական չէ՞ մի քանի բառեր թոթովել, թութակի նման, մի քանի ձայներ հանել, այնպէս որ անոնց իմաստը լրացնեն իր թուչին մի փոսիկն և շուրթին մի ժպիտը։ Գռեհիկ, ամեն բնական ձիրքէ զուրկ էակի բաժինն է ուսումն։ Իր բնատուր օժիտն ուրիշ տեղ է, և չէ թէ մայրենի բարբառին և եւրոպական լեզուի մէջ՝ որու մի քանի աննշան դարձուածներն իբրև ընթացիկ դրամ կրնայ քշել՝ առանց վտանգելու իր երեսին գոյնն և աչերուն նշոյլն, ցոլացնելով այդ գոյն ու նշոյլն գրական և գիտական տաղտկալի գրեանց վրայ։ Քանի հնագէտ է Նունա։ Ընկերական ակմբի մէջ լուրջ վէճ մը որ բացուի, հոգ չըներ եթէ անոր մէջ բառ մը ղնելու անկարող գտնուի. բերանը բաց մտիկ կ'ընէ և ճչունի պէս սպիտակ ակռաներովը կ'մասնակցի։ Իսկ երբ իր սմսեղուկ ժպիտն անզօր գտնուի խօսակցութեան տարբեր ուղղութիւն մը տալու, իսկոյն կատուի պէս կ'ուռի, կ'սարսռի ու կ'բարկանայ, որ իր շղուականին ծայրը խնդրոյ նիւթ չլինիր, և ընդոստ ոտք ելնելով որսորդ մը կ'փնտռէ, մինչ գանգրահեր բաշը կ'ծածանի, դէմքը կ'գունատի, և հիւրերը լեղապատառ կ'պօռան. — Ի՞նչ ունիս նաղելի Նունա. — Եւ Նունա՝ իրը դիցուհի՝ շեշտելով սուր նայուածքը.—Ի՞նչ անհամ էք այս գիշեր կ'մրմնջէ, և իսկոյն կ'շրջապատուի իբրև կուռք շօշափելի քան պաշտելի, այլ շնուաղիր, այլ յաղթական քայլով մը կ'դիմէ նորէն իր աթոռն ու կ'նստի չորս դին արհամարհոտ ժպիտներ բաշխելով։ Եւ ապա կ'սկսի բանակռիւ մը արդուզարդի և քրջերու վրայ, նշանտուքի ու հարսնիքի վրայ, նիւթեր՝ որոց մասին՝ իբրև բանեղ ու բառահեղ՝ նմանը չունի Նունա։ Եւ ինչպէս գիտէ ուրիշ սիրամարգներու փետուրները վիճատել, միսը կտցել և արիւնը կտիկ կտիկ խմել։ Բանբասանքն է իր կռուանը՝ որու վրայ կ'թռի կ'սլանայ ու կ'յոչոտէ իր որսը, թէև սա շատ աւելի անմեղ, շնորհալի և արժանի վի-

նի քան չահէնն։ Անզգայ է Նունա. չլսեր իր վէս, անչահ վարմունքին դրդռած կծու փափսուքը։ Եւ ինչ երկիւղ ունի, քանի որ իր զէնքն է երկսայրի — ոսկեկուռ օժիտն [illegible] ա. չէր, որ սակայն երբեմն չիլ չողեր կ'սփռեն կաւեղէն գանձերի վրայ, զի իրրև չրջանակի մէջ դրուելու մերթ պաղուկ ու գեղնուկ գունաներկ պատկեր մը՝ անկենդան կ'թուի Նունա։ Ունի աղջկան անուն, այլ ոչ տան աղջկան, հոգասէր համարատ ու մաքրասէր տան աղջկան։ Առտնին գործ, հաւքտուք, լուացք, խոհանոց աղտելի բաներ են Նունայի համար, իր փափկիկ թաթիկներուն անարժան սնոտիներ։ Այեն ինչ սպասուհիներ կը պատրաստեն, կ'բերեն կ'տանին, մինչև անգամ ոսկեծիր թքամանն, զոր ի հարկին, իր մանր քթին տակ կ'բռնեն . . . ։ Ի՛նչ որ Նունայէն կ'բխի գին ունի, իր մարմինը միայն գին չունի և անոր հոգը միայն ստանձնած է Նունա։ Իր կարևոր գրաղումն ֆոէնն է, չէ թէ հոգին, միտքը, երևակայութիւնն, այլ իր հայելին կ'պատկերէ իրեն այդ իտէալը։ Եւ այս պատճառաւ՝ Նունա ժամերով կ'մնայ իր հայելիին առջև, կ'վերնայ, կ'հիանայ այն մարմնոյն հանդէպ՝ որուն ստէպ ամենէ թագուն մասերն իր աչքին կ'պարզէ, մինչև որ պատկերողին կ'սիրահարի պատկերը ն և տատրակի պէս կ'մնչէ. — «Եւ ո՞վ պիտի լինի այն յաղթականն որուն պիտի սևեռին այս իմ սև փալփլուն խոշոր աչերս, որուն բերնին պիտի դրոշմուին այս իմ բոսորագոյն շրթերս, և որ ջլուտ թևերն պիտի սեղմեն այս անմման իրանս, որուն մասները պիտի շոյեն այս սևաթոյր մազերս՝ որ կ'ծածանին բոլորաձև սարաւանդներուս վրայ. — Անշուշտ կոմս մը, իշխանազուն մը պիտի լինի այդ մահկանացուն և ոչ թէ այն հասարակ խնկարկուներն որ չեն արժանի մինչև իսկ իմ անուշաբոյր ստուերիս։» Եւ իրօք Նունա կ'անգոսնէր այն պատանիներն որ՝ թէև համեստ, աղնիւ, ուշիմ և գործունի, չունէին տիտղոս մը, պատուանուն մը, շքանշան մը։

Սակայն Նունա՝ իբր վարդ երփնագոյն թղթի՝ անցուցեր էր արդէն քսան հինգ գարուններ և իր թերթիկներն քիչ քիչ կը թօշնէին։ Ի՞նչ սրբապղծութիւն։ Ո՞վ էր մեղաւոր, թերևս իր հայելին որ տեղի կ'տար ուրիշներու, բայց ի զուր. աշնանային հովն սկսեր էր աւերումներ ընել իր դեղնափայլ մաշկին վրայ։ Նունա անմխիթար է. է՞ր կ'ուշանայ իր մատաիպարն։ Անդարմանելի կ'դառնայ կորուստն որուն դէմ չպարն անզօր կ'երևի։ Թող օրը չորս անգամ Նունա փոխէ կերպարան, տարազ. ոչ դուքս, ոչ

կոմս կ'երևի և ոչ պառոն մ'անգամ իր ականջին չեն փսփսար ցանկալի բառը . . . : Ի վերջէ՝ յուսահատութեան ուրուականը պաղ տարիներու ճիւաղին հետ կ'պաշարեն Նունայի ոսկեգոյն հորիզոնը և մերթ ընդ մերթ աղի արտասուք կ'ողողեն իր աչերը: Արտեղութեան վշտագին ճիչեր արձագանք կ'հանեն երբեմն իր մութ ննջարանին մէջ: Իր աստղը սև քօղով կ'պարուրի, իր ծնողքը թշնամիներ են որ իր արժանեաց յարմար փեսացու մը չեն գտներ: Փեսացու, նշանած, ինչ անշնորհ անուններ էին երբեմն: Ի'նչ անկումէր այս Նունայի համար: Հարկ էր թողուլ իր ապրած չարաչուք շրջանն և այլուր բաղդ փորձել: Կ'թռի տար աշխարհ Նունա, այլ կ'փորձուի: Ամիրայի մը բեկորին կը զարնուի, իր սիրտը կ'փշրուի շատ շուտ: Նունա գրկաբաց կ'ընդունի այս փրկութեան փտուն փայտն և աւելի խոր անարգութեան ծովու մէջ կ'սուզի: Արևանգումն կ'պսակէ յուսահատ կուսին ու անիծեալ ֆոշոյ հալումաշ սիրահարին ճակատը: Անհոգի դիակ մը և կեղծամ մ'իր գրկաց մէջ տեսնելով Նունա սոսկում ու պժգանք կ'զգայ . . . : Թէև արամբի՝ Նունա ազատ է այնուհետև: Կ'գահավիժի ուր որ կնային պատիւն իր մահավիճակն կ'գտնէ: Ո՞ւր են Նունայի համար կուսային տարիներու խօլական երազներն, ո՞ւր՝ իր իտէալը: Ահա ծաղու նշաւակ մ'է որոց երբեմն միայն արհամարը ունէր: Վէճութեան, ինքնասիրութեան և տգիտութեան ժահահոտ գոլորշիներու զոհ . . . Նունայի ամբարտաւանութեան պատուանդանն իր պատուոյն գերեզմանը կ'լինի:

Վ. Ի Ն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 27* Նոյեմ. 1890

Բարեկամ, Ո՛ առաքինութիւն, դու լոկ բառ մ'ես՝ կ'գոչէր Կատոն յուսահատ՝ յաղթական մոլութեանց առջև, ո՛ բաղդ, դու տիրապետն ես աշխարհի կ'գոչէ Ամբակում ազբարն՝ ցաւագին՝

* Նախորդ նամակիս թուականն սխալմամբ տպուեր է Նոյեմբեր 27, մինչդեռ պարտի լինիլ Հոկտեմբեր 27:

ուղիղ բանի և ճշմարտութեան յաղթանակներու առջև։ Եթէ Կատոն անիրաւ էր, Ամբակում իրաւունք ունի, վասն զի ինք այնպէս կ'կարծէ որ ճշմարտութիւն, արդարութիւն, յաջողութիւն բաղդին զաւակներն են։ Եթէ մարդ անբաղդ է, ինչ որ բռնէ հող, փոշի կ'կտրի, եթէ մարդ բաղդաւոր է, ինչ որ բռնէ ոսկի կ'կտրի։ Մի՞թէ սքանչելի չէ՞ այս աշխարհաղիտութիւնն։ Եւ ո՞վ է ըսողն։ Արարած մ'որ Ադամի դրախտէն ուղիղ դծով ընկած է այս աշխարհի դժոխքն, Թսրդոմի թոռն՝ որու զլխուն մազերուն չափ դարեր անցուցեր և տակաւին խելք չէ դրեր, տակաւին բաղդէն կ'սպասէ իր օրապահիկն, իր կրթութիւնն, իր փորձառութիւն, և ոչ աշխատութեան, պատմութեան, զիտութեան և արդարութեան տուած դասերէն։ Եւ ինչո՞ւ չէ, քանի որ կ'նայի այլ լրեանք. ինչ փոյթն է անցելոյն խրատն, ներկային իրական պիտոյքն, և ապագային հոգն. բաղդն է իր նեցուկն և երջանիկ բաղդախնդիրն ու փոռամոլն իր առաջնորդն։ Շատ ու շատ տարիներէ ի վեր՝ կ'նայի որ իր եկեղեցին, իր գըրականութիւնն, իր ազգութիւնն՝ իր թափառիկ կենաց մէջ՝ ո՞ւր զտած են անքոյթ ապաւէն մը, այլ չտեսներ թէ ինչո՞ւ համար այդ ապաւէնն անքոյթ է, ինչո՞ւ դեռ հայութիւնը շունչ ու լեզու ունի։ Մանկական հասակէն Ամբակումը կ'նայի որ իր ազգակիցներէն ահագին հատուածներ այլ և այլ ազգերու անդունդն անհետ եղած և անոնց փոշիներն զորս հովին ցրուած են, այլ չտեսներ, չտրամաբաներ այդ անհետութեան ու փոշիացման պատճառները։ Վաթսուն տարի է ի վեր՝ կ'նայի որ ահաւոր պետութիւն մ'իր կաթողիկոսներուն գլուխն երկաթեայ կրուկին ներքև ճզմելով՝ իր եկեղեցւոյն ծոցը արջառաջիլ ի ձեռին մտած է, այլ չտեսներ թէ ինչ են այդ արջառաջիլութեան պատճառն ու նպատակը։ Անհամար տարիներէ ի վեր՝ կ'նայի թէ ինչպէս շատ ժողովուրդներ կ'յառաջանան նիւթապէս, բարոյապէս ու մտապէս, այլ չտեսներ թէ այդ յառաջադիմութեան օրէնքն ինչ են։ Երեք չորս հարիւր տարի է ի վեր կ'նայի որ խղճի ու կրօնի ազատութիւնը լաւ բան է, այլ չը տեսներ որ միանդամայն լուսաւորութեան շաւիղ և յաջորդական զարգացման հիմն ու հնարն է։ Կ'նայի միշտ որ իր առտնին, առևտրական ու ճարտարական գործունէութեան առջև լայն ասպարէզ մը բացուած է, այլ չտեսներ թէ ինչո՞ւ համար իրեն վիճակակից մարդիկ շարունակ կ'հարստանան ու կ'ծաղկին Օսմանեան պետութեան հովանւոյն ներքև, մինչդեռ իր ազգային

կենսական ոյժերը կ'սպառին և իր եկեղեցւոյն օրինաց և Սահմանադրութեան տրամադրութեանց դէմ վաղուց որոշումներ և գործեր կ'տեսնուին։

Եւ ի՞նչ է նայիլ և չտեսնել, եթէ ոչ Ֆիզիքական ու մտային հակուրութիւն մ'որու առջև իրերը ստուեր, լոյսը խաւար, թզուկը տիտան, պատճառներու և արդեանց չղթային յետին օղակը բաղդ կ'երևի։ Ի՞նչ երկար գործ այդ օղակը գտնելու համար խորհիլ, զննել, վերլուծել, համեմատել ու մակածել։ Աւելի կորուկ ճամբայ մը չէ՞ նայիլ ու չտեսնել, մրափել և բաղդին տալ դժբաղդութիւններ որ տգիտութեան արդիւնք են։

ՇԱՀՆՈՒՐ

ԼՐԱՐԱՂ

Գեր. Օրմանեան Սրբազան Արմաշու դպրեվանուց երկամեայ հաշիւները խնամակալութեան ներկայելու համար պէտք գտացած է մայրաքաղաքն անձամբ դնալ։

Ամեն. Խրիմեան Սրբազան Երուսաղէմ ուխտի գնալու մտաք Բ. Դռնէն արտօնութիւն խնդրած և ընդունած է, այնպէս որ մի քանի շաբաթէն ճամբայ պիտի ելնէ եղեր։

Բ. Դրան և հայ երևելեաց ոմանց մէջ եղած բանակցութիւնք առանձնաշնորհմանց մասին՝ կ'յուսադրեն որ Սրբազան Պատրիարքն ի մնոյ պիտի ելնէ նստի իր աթոռն և ազգային ժողովները պիտի վերակազմուին։

Մկրտիչ Աղաթօն Էֆէնտիի մահն ի Միտիլլի՝ ուր Հանրային Պարտուց Վարչութեան տնօրէն էր, մեծ սուգ պատճառեց բոլոր հայոց, զի Աղաթօն Էֆ. իբրև վաղեմի ազգային գործիչ նշանաւոր ծառայութիւններ մատուցած է։ Իր յուղարկաւորութեան հանդէսը մեծ շքով կատարուած է ի Միտիլլի։

Շ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական, ելմտական, գաղթային, մարդասիրական և մանաւանդ բժշկական խնդիրներ կ'յուզեն Եւրոպայի հասարակաց կարծիքը։ Իրլանդական կուսակցութեան մէջ՝ ի շնորհ Օշէա

կնոջ ազնիր աչաց, հերձուած մը կ'մտնէ. Պ. Բարնէլի ապօրինի յարաբերութիւնն այդ կնոջ հետ իր քաղաքական դիրքը կը-վտանգէ իբրև պետ և մլիչ ինքնօրինութեան դատին և Պ. Կլատստոն կ'դժկամակի գործել մարդու մը հետ որ իր պատուոյն այնքան հոգը չունի որքան փառամոլութեան։ Եւրոպական ապդ. ժողովները կ'բացուին, գահաճառեր կ'արտասանուին խաղաղութեան աւետաբեր։ Պէրլին դրամատան ձախողութիւնը՝ շահադիտական մեծ գործողութեանց արդիւնք՝ ելմտական մեծ տագնապ կ'պատճառէ պահ մը, և Անգլիոյ պանքային փոխառութեամբ Ֆրանսական և ռուսական պանքաներէն ծանր դրամական աղէտից առաջը կ'առնուի և վստահութիւնը կ'վերահաստատուի։ Պ. Սգանլիի և իր մի քանի սպայից մէջ ծագած բանակոիւն Պարտլոդ հաղարապետին անգութ վարմանց եՀէմսընի մարդակերներու տուած պժգալի խնջոյքի մասին՝ ընդհանուր զզուանք կ'պատճառէ։ Պ. Պութհի՝Փրկութեան բանակի հաղարապետին՝անուանի դիրքը, Ֆոռ-թլաթ Անդլիա անդիկ ելելոնճանքան, որով անգլիացի ընկերիկ, սովալլուկ, անօգնական տառապելոց գոնէ մէկ մասին օգնութեան ձեռք կարկառելու համար զանազան մարդասիրական միջոցներ կ'առաջարկէ և փորձ մ'ընելու համար առայժմ 100 հազար ոսկի կ'պահանջէ, համակրական ընդունելութիւն և սատարներ կ'գտնէ. իսկ ամենէ աւելի աշխարհի ուշադրութիւնը գրաւող գիւտն եղաւ Տոքտոր Քոխինն, որ թոքախտն առաջին աստիճանին մէջ բուժելու դեղն գտած է, գիւտ՝ որու հրատարակութիւնն թէև կանխահաս, անհամար հիւանդներ և բժիշկներ դէպի Պէրլին կ'մղէ և շատեր յուսահատ ետ կ'դառնան իրենց անսահման վստահութեան համապատասխան դարման մը չդտնելով։ Հոլանտայի թագաւորին մահուամբն Իմմա թագուհին խնամապետուհի կ'կարգուի։ Իսկ եթէ քաղաքական շարժումներն չեն սպառնական, բնական փոթորիկներ սոսկալի աւերումներ կ'պատճառեն այս վերջին օրերս եւրոպական այլեայլ երկիրներ։ Սառնաշունչ ցուրտն, ձիւնն ու ողողումներ յատկապէս Գերմանիա և Աւստրիա շատ ընտանիքներ անտուն և անտերունչ թողուցին, ինչպէս երկրաշարժներն ի Հունգարիա, մրրկայոյզ հովեր ի Նորվէկիա։

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Արդէն յայտնի է որ սոյն բառարանը մամլոյ տակ է, 3/4 մասը տպուած և յառաջիկայ տարւոյ մէջ տպագրութիւնն ամբողջովին կ'աւարտի։ Սակայն կան քաղքիս մէջ մաս մը բաժանորդներ որ տակաւին իրենց բաժինները չեն վճարած։ Յաւալի է այս պարագան, մանաւանդ անոր համար որ անոնց կողմէ աւելի մեծ փութաջանութիւն յուսալի էր այնպիսի գործի մ'աւարտման համար որ հայրենակցի գործ է քաջալերութեան արժանի և մեծ ծախուց կարօտ։ Պիտի փութան անշուշտ չվճարողներն իրենց պարտքը կատարել. վասն զի բաժանորդագրութիւնը պիտի փակուի և այնուհետև բառգրքին գինը պիտի լինի 1 ½ լիրայի։

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ
1891
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻԱՆԴԱՆՈՅԻ

ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Գին 40 փարա

Կեղրոնատեղին է Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան դրասենեակը. Կ. Պոլիս Մեծ–Նոր–խան, միջնայարկ, թիւ 48, 49, 50։

Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքը չկրող օրինակները վաւերական չեն։

Խմբագիր–Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՏՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵՄՆ

Արևելեան Մամլոյ տարեգիրքն է Զմիւռնիոյ համար $3\frac{1}{2}$ արծաթ մէճիտիյէ, իսկ դուրսերու համար՝ 4։

Խմբագրութեանս վերաբերեալ ամեն նամակ, ձեռագիր պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան, Մամուրեան Տպարան Մեսրոպեան վարժարանի քով։

Անվճար նամակ կամ ծրար չընդունուիր։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բաժանորդ գրուիլ ուղղը կրնայ դիմել

ԶՄԻՒՌՆԻԱ առ Խմբագիր-Տնօրէնն.

Կ. ՊՕԼԻՍ Մեծ. Ն. Կ. Պէրպէրեան. Էվէն Զապտիէ Հապպէսի, 63.

ՏՐԱՊԻԶՈՆ » Գարուն Ս. Զելինկիրեան.

ԴԱՎՐԷԺ Ա.ադ խան Ադիանտիլեանց.

ՊՕԹՈՒՇԱՆ Արժ. Տ. Պօղոս Յակոբեան.

ՄԱՐՍԻԼԻԱ Մեծ. Ս. Միրզայեանց. M. S. Mırzayantz.
MARSEILLE.

ՄԱՆՉԷՍԹԷՐ Դեր. Ս. Վ. Պարոնեան.

ԿԱՐԻՆ Մեծ. Ա. Մատոյեան.

ԱՐԱԲԿԻՐ Մեծ. Ս. Ամատեան.

ՍԵԲԱՍՏԻԱ Մեծ. Ա. Զամանեան.

ԱՄԱՍԻԱ Մեծ. Յ. Սէզէնեան.